

21.119

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԻ

ՀՐԱՄԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱ-Ի № 63

26.04.2013

21.111

15 JAN 2010

15 FEB 2007

33

h-61
ար

ԻՆՉ Ե ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ
ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

10003
13423

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԻ-Ի № 63

ՅԵՐԵՎԱՆ 1927 թ.

Ի՞նչ է գլուխաւութեանը ՅԵՎ ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ Ե ՀԱՐԿԱՎՈՐ ՆԱ

Այն հիմքը, վորի վրա կառուցվում է մարդկային հասարակության ամբողջ կյանքը, տնտեսությունն և, պայմանքն այն յեղանակը, վրաով հասարակությունը ձեռք ե բերում իր գոյության համար անհրաժեշտ ամեն բան։ Այն զիտությունը, վոր ուսումնասիրում և տնտեսության յեղանակները կամ հասարակական արտադրության կազմակերպությունը, կոչվում ե քաղաքատնտեսություն։ Նրա խնդիրն ե ուհամանել այն որենքները, վորոնցով կառավարվում ե հասարակական տնտեսությունը։ Այդ որենքներն իմանալը մարդուն հնարավորություն ե առիս նախատեսել, թե ինչպես ե լինելու մարդկային առաջարարակությունը և ինչ պետք ե անել այժմ, վորպեսզի մոտենանք հասարակական արտադրության լավագույն կազմակերպությանը։

Մեզ, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության քաղաքացիներին համար տնտեսական կյանքի որենքներն իմանալը հստակապես կարևոր է։ Քաղաքատնտեսություն չի մանալով, մենք չենք կարողանանք գլուխ հանել այն բոլոր հարցերից, վոր կյանքը զնում ե մեր առաջ։ Մենք չենք կարողանա պատասխանել, թե ինչու մեղ մոտ ծագեց «մկրատը», այսինքն քաղաքի արդյունաբերության արտադրանքի և գյուղատնտեսության արտադրանքի գների տարածմանը (քաշօյնելու), մեզ համար բարովին պարզ չեր լինի, թե ինչու բանվորների աշխատավարձը գեր ցած է, մենք չենք կարողանանք գլուխ հանել դրամական ուժագործի հարցերից և այլն։

Քաղաքատնտեսություն իմանալը և այն հարցերը հառկանալը, վորոնք ծառանում են մեր տնտեսության առաջ, չե կարելի զիտել իրքի հասարակ հետաքրքրություն։ Այդ բանը շատ մեծ դորձնական գեր է խաղում։ Ի՞նչպես կարելի յեր, որինտկ, իրագործել

ՀԱՅՊՈԼԻԿՐԱՆԻ ՏՏԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 870
ԳՐԱՌԵՎ. 470 Բ. ՏԵՐԱԺ 1000.

պրամական ու փորձը, փրկվել ընկնող խորհրդային դրամանցից և անցնել հաստատուն չերպանեցին, յեթե հայտնի շը լինելին դրամի շրջանառության որենքները: Ի՞նչպես կարելի կը լիներ բարձրացնել աշխատավարձը, յեթե հայտնի շը լինելին նրա ցածրցման պատճառները: Վերջապես, ի՞նչպես կարելի կը լիներ վոչնչացնել «մկրամբ», յեթե հայտնի շը լինելին այն որենքները, վորոնց յենթարկվում են չուկայի գները: Այս պատճառով ամեն մի զիտակից խորհրդային քաղաքացի, վոր ուզում է հասկանալ, թե ինչ և կատարվում իր չուրջը և ցանկանում ե ոգնել նոր հասարակության շինարարությանը, պետք է ծանոթ լինի քաղաքանականության: Նա բանալի կը տա նրան հասկանալու շատ բան: Նա ցույց կը տա նըրան նաև, թե ինչ պետք է անի նա, վորակեսի այժմյան կյանքում «ավելորդ մարդ» չը լինի:

Քաղաքանականությունը ծագել է կապիտալիստական հաստրակության հետ միասին: Այս բացատրվում է այն բանով, վոր կապիտալիստական հասարակության տնտեսական կազմակերպությունն ամենաբարզն է առաջներում բոլոր զոյտթյուն ունեցածներից: Սկզբում քաղաքանականությունը ծագեց իրեն մի ուսմունք, վոր ցույց էր տալիս, թե ինչ պետք է անի պետությունը, վորպեսի հարուստ լինի: Այլ հարցի քննությունը հասցրեց այն բանին, վոր սկսեցին վորոնել կապիտալիստական հասարակության տնտեսության հիմնական որենքները, և հետեղնեան ծագեց մի զիտական բարդ սիստեմ, վոր շարադրում է այդ որենքները:

Սակայն, քաղաքանականության հիմքը զնող բուրժուուկան զիտականները չկարողացան մինչև վերջ հայտնաբերել այն բոլոր որենքները, վորոնց յենթարկվում է կապիտալիստական տնտեսությունը: Դաստիարակային շահերը նրանց բանդարեցին այդ անել: Կապիտալիստական հարաբերությունների շահագործական լինութը մասմբ հայտնաբերելով, նրանք յետ քաշվելու ազդանշան տրվեցին: Նրանք չահմանեցին կապիտալիստական հասարակության զարգացման ընթացքը, վորը տանում է զետի բուրժուազիայի անխուսափելի անկումը, և այդ հենց այն պատճառով, վոր նրանց զառակարգային շահերը թույլ չելին տալիս նրանց տեսնել այդ: Այդ պատճառով իրեն հասարակական տնտեսության որենքների զիտական հետազոտության շարունակազներ, հանգես յեկան պրուտարիտակի կողմնակիցները: Նրանք այդ հետազոտությունը հար-

ցրին մինչև վերջ և սահմանեցին այն ուղին, վորով պետք է ընթանաւ մարդկային հասարակությունը: Նրանց յեզրակացությունը հանգում եր այն բանին, վոր կապիտալիզմը պետք է ինքն իրեն խորակի և նրա տեղը կը ծագի կոմունիստական հասարակությունը:

Մեր գրքույկում մենք կը փորձենք համառատ շարադրել այն-աւսական կյանքի այն բոլոր զիտալոր որենքները, վոր սահմանել և քաղաքանականությունը (զիտալորակնե, Մարքսն ու Ենդելը), ցույց տալ, թե ինչու կապիտալիստական հասարակությունը պետք է ծանոթ լինի քաղաքանականության: Նա բանալի կը տա նրան հասկանալու շատ բան: Նա ցույց կը տա նըրան նաև, թե ինչ պետք է անի նա, վորակեսի այժմյան կյանքում «ավելորդ մարդ» չը լինի:

Մենք հենց պետք է սկսենք կապիտալիստական հասարակությունից: Նրա վրա ավելի հեշտ և սահմանել անտեսական կյանքի հիմնական որենքները, վորովհետեւ այնանդ չկան պատերազմի և հեղափոխության առաջ բերած կողմնակի հանգամանքներ:

Այդ որենքները սահմանելով, մենք կարող ենք անցնել Խորհրդագյին Միության անտեսությանը և ըմբռնել, թե ինչ նոր բան է մտցրել անտեսական կյանքում մեր հեղափոխությունը: Կապիտալիզմի որենքները նախազես իմանալը մեզ հնարավորություն կատարվ ըմբռնել նեղ-ի (Նոր Տնտեսական Քաղաքականության) պարագաները: Մենք այն ժամանակ լրակ կը հասկանանք, թե ինչու խորհրդային իշխանությունը տարբերվում է կապիտալիստականից և ինչու նա պետք է սոցիալիստականի փախի:

ԾՈՒԿԱ ՅԵՎ ԳԻՆ

Առաջին հարցը, վոր կանգնում է կապիտալիստական արևաեսության որենքներն ըմբռնել ցանկացող մարդու առաջ, այդ հարցն և, թե ինչո՞ւ, չնայած այն բանին, վոր վոչ վոք նրա մեջ չի զեկալարում տնտեսական կյանքը, հասարակության բալոր պահանջները բավարարվում են: Ամեն մի կապիտալիստ, արհեստավոր և զյուղացի արտադրում է բոլորովին ինքնուրույն և իր անտեսական գործունեյության ընտրության մեջ վոչ վոքից կախված չե: Առաջին գործունեյության ընտրության մեջ վոչ վոքից կախված չե: Թվում և, վոր այսպիսի կարգի ժամանակ մարդկային հասարակությունը պետք է մշտապես տուժեր մեկ վորեն արդյունքի (պրո-

գուկտի) պակտու, մեկ ել մի ուրիշի ավել լինելուց: Ամբողջ հասարակական արտադրության վրա զեկավարության բացակայության չնորհիվ, կարող եք պատահել, վրը, որինակ, խանութներում անհարժելի լիներ կոչիկ հարել, վորովհետեւ առաջներում կոչակարությամբ զբաղվող բարոր մարդիկ վորեն այլ գործի յեն անցել (չէ՞ վոր նրանց վոչ վոք չեւ հարկադրում չենց կոչիկ պատրաստել. նրանք կարող ենին ձիասարք, քատիներ և այն պատրաստել): Սակայն, կապիտալիստական հասարակության կյանքը զիտելով, մենք համարյա յերբեք նրա շուկայում չենք տեսնում վորեն ապրանքի բացակայություն (իհարկե, բացառությամբ այն գեղերի, յերբ արտաքին պատճառները, որինակ՝ պատերազմը, խանգարում են անտեսական կյանքի սովորական ընթացքը): Միշտ ապրանք արտադրվում ե այնքան, ինչքան հարկավոր ե, և այնպիսին, ինչպիսին հարկավոր ե: Ինչո՞ւ յեւ այս այսպես: Ինչո՞վ բացարքել կապիտալիստական անտեսության այսպես համաձայնեցրված լինելը:

Այս հարցի պատասխանը տալիս ե շուկայի ուսումնառությունը: Կապիտալիստական հասարակությունը անվանում են նույնագետ և ապրանքային հասարակություն: Այս անունը նրան արված ե այն պատճառով, վոր նրա մեջ ամեն մի կապիտալիստ արտադրում է վոչ թե իրեն համար, այլ շուկայի համար, վաճառքի համար. ամեն վոք արդյունները չի մշակում իր սեփական պահանջների բավարարման համար, այլ ապրանքներ՝ շուկայում վաճառելու համար: Յեկանա այդ շուկան ել կանոնավորում է արտադրությունը^{*)}: Իսկ ի՞նչպես կարող ե շուկան կանոնավորել արագրությունը: Շատ հասարակ ձեռով: Յենթաղբենք, վոր վորոչ ժամանակ շուկայում քիչ չիթ կար: Բոլոր գնորդները չկարողացան այնքան հարել, ինչքան իրենց հարկավոր եր: Շուկայում չիթը պահասում ե: Առևտրականները տեսնելով, վոր գնորդները շատ են և չիթը լավ է վաճառքում, սկսում են գները բարձրացնել, վորովհետեւ դրությունը նրանց համար ոգտակար ե: Չիթն արագ սպասվում ե նաև բարձ-

*) Քաղաքանակության մեջ շուկա կոչվում է վոչ թե այն տեղը, վորովել կատարվում է առևտուրը, վո՞չ ել բազարը, այլ ընկերացին ամբողջ առևտուրը, ամբողջ փոխանակային գործարքները, յերկրի կամ նույնիսկ բալոր յերկրների («Համաշխարհային շուկա») ամբողջ առևտրական շրջաբերությունը (օборու):

բացրած գներով: Յանկանալով ոգտագործել բարենպաստ զբությունը, առևտրականներն շատով կարգով գործարանատերերին պատվիրում են չթի նոր պարտիաներ, իսկ գործարանատերերը նույնպես բարձրացնում են դեռդական գինը: Գործարաններն ակում են լիննթաց աշխատել: Այժմ չիթ արտադրելն ոգտարկար է: Չթի արտադրությունը լայնանում է, վորովհետեւ ամեն մի վաճառական ու գործարանատեր ուզում է ոգտագործել բարենպաստ մամենարը: Չթիը շուկա յեւ գալիս շարունակ ավելի ու ավելի մեծ քանակությամբ: Նրա գինն սկսում է ընկել: Վերջի վերջու աշխատիսի գլուխություն է սաև զծվում, վոր շուկայում ավելի շատ չիթ ե լինում, քան հարկավագ է գնորդներին, և նրա գինը վերջնականապես ընկնում է: Առևտրականները չեն կարողանում արտաք ու ոգտագիտական այն այն գարարում են նոր պարտիաները պատվիրելուց և սպասում են գնորդի: Գործարանների աշխատանքը քչանում է: Առժամանակ շիթը զարգարում է ոգտակար գործ լինելուց: Բայց շուտով դրությունը կրկնի շուկայում է, վորովհետեւ հետզհետեւ վաճառքում է առևտրականների գնած ապրանքը և նրանք նորից սկսում են պատվերներ առաջարկում են գնորդի: Գործարանների աշխատանքը քչանում է: Այսպիսի գնիքը գործարանների առաջարկում է ապահովությունը:

Այսպես ուրիմն, մենք աեսնում ենք, վոր շուկան կանոնավորում է արտադրությունը գների ոգտությամբ: Ապրանքի բարձր գինն սկսակար է զարձնում նրա առևտուրը և կալիստալիստներին մեծ շահույթ է տալիս: Նրանք սկսում են ուժեղ թափոլ արտադրել ու արածել այդ ապրանքը: Բայց շուտագ ստաջարկվող ապրանքի քանակն սկսում է գերազանցել նրա պահանջը, և նրա գինն ընկնում է: Այս մշակելը դասնում է ամելի քիչ ոգտակար, և նրա արադրությունը քչանում է:

Ապրանքի զնի բարձրացնումը, վոր կապիտալիստ է շահույթի բարձրացման հետ, այն հետևանքն է ունենում, վոր այդ ապրանքի արածերությունն ավելանում է: Բայց յերբ խիստ շատ ապրանք է հանգում շուկա, նրա գինն ընկնում է և շահույթը քչանում: Հետեանքն այն է լինում, վոր քչանում է նաև արտադրությունը: Գըների այդ մշտական տատանումն այնպես է աղդում արտադրության չափերի վրա, վոր միջին հաշվով նրանք համապատասխանում են շուկայի պահանջներին: Վերե ու ներքեւ կատարվող այսպիսի աստանանումների ոգնությամբ, ապրանքների արտադրությունը սահմանվում է այն շափերով, ինչքան մոտավորապես հա-

սարակության կարիքն եւ Յեկայն պատճառով, արտադրության սովորական ընթացքի ժամանակ, մենք միշտ կարող ենք չուկայում գտնել այն, ինչ վոր մեղ հարկավոր է:

Գնի տատանումները, սակայն, մնում են վորոշ միջին մակարդակի վրա: Յեկ մեր մեջ հարց և ծագում, թե ինչից և կախված այս կամ այն ապրանքի գների միջին մակարդակը: Ինչի՞ց եւ, որինակ, վոր յերկաթի միջին գները շարունակ նշանակալի չափով ցած են պղնձի միջին գներից կամ անազի միջին գներից: Արդյոք շուկան կարծող և պատասխանել այս հարցին: Զե վոր գինը, կարծեք թե, այնակ և կազմվում:

Փորձենք ըբժունել այս հարցը: Ինչպես և սահմանվում ապրանքի գինը շուկայում: Ամենից առաջ պարզ ե, վոր առետրականի համար ոգտակար և վաճառել ավելի բարձր գնով, իսկ գնորդի համար, ընդհակառակը, ոդտակար և ցած գինը: Գնորդի ու առետրականի շահերը հակադիր են: Բայց մյուս կողմից՝ ամեն մի առետրական գիտե, վոր չափազանց բարձր գինը, յեթե ինքը փորձեր պահանջել այն, գնորդի գնելու ցանկությունը կը փախցնի, և առետրականը վոչ միայն չի կարողանա մի շահույթ ստանալ, այլև բնոշանիրապես չի կարողանա վաճառել ապրանքը: Ամեն մի առետրականը շահագրգույշ և գնորդներին իր մրցակիցներից մյուս առետրականներից խելով: Իսկ ի՞նչպես կարող ենա գնորդներին իր կողմը դրավել: Միայն գինը ցածացնելով: Այս հանդամանքը, այսինքն առետրականների մրցությունը հենց հացնում է այն բանին, վոր գները կանգնում են վորոշ համեմատարար ցած մակարդակի վրա:

Հարկավ, յեթե ապրանքը քիչ ե, իսկ նրա գնորդները՝ շատ, առետրականները կարող են բարձրացնել և բարձրացնում են նրա գինը: Յեթե, ընդհակառակը, ապրանքը շատ ե, իսկ նրա գնորդները՝ քիչ, ապա, վորպեսզի գոնե վորոշ հասույթ (վարչուկա) ըստանան, առետրականները հարկագրգույթ են ցածացնել ապրանքի գինը: Մենք այստեղ նորից գալիս ենք գների տատանմանը: Մենք գիտենք, վոր այդ տատանումները կատարվում են ինչ-վոր միջին մակարդակի վրա և ցանկանում ելինք սահմանել, թե ինչից և կախված այդ մակարդակը: Բայց ցանկանալով բացատրել գները շուկայի մրցության որենքներով, մենք հասանք այն բանին, վոր բա-

ցատրեցինք միայն գների տատանումները և վոչ թե նրանց միջին մակարդակը:

Շուկայի գները մեզ պատասխան չտվեցին այն հարցին, թե ինչու պղնձի գինը շարունակ բարձր և յերկաթի գնից և ցած ե, որինակ, վոսկու գնից: Ինչ գրության ել վոր մինի շուկայում, վոսկին իր գնով յերբեք չի հավասարվում պղնձին, իսկ պղնձը՝ յերկաթին: Ակնհայտ ե, վոր այստեղ վոչ թե շուկան ե գեր խաղում, այլ մի ինչ-վոր ուրիշ բան: Իսկ ի՞նչն ե վորոշում ապրանքի միջին գինը:

Փորձենք մոտենալ մեռիշ կողմից: Գուցի, մի ջինք կինք կախված և արտադրության ծախքերից: Իրոք, ապրանքի մշակումը կապիտալիստից պահանջում է վորոշ ծախսումներ (հում նյութի, աշխատավարձի, գործի մեջ դրած կապիտալի շիջուցում և այլն): Այս ծախսերն ապրանքի վրա ոցելով, կապիտալիստը նրանց վրա ավելացնում է սովորական շահույթը և արդյունավետ ստանում և ապրանքի գինը: Առաջին հայացքից, կարծեք թե, այս բացատրում և միջին գները, բայց միայն առաջին հայացքից: Ի՞նչ ե ասում այս բացատրությունը: Ապրանքի գինը կախված և արտադրության ծախքերից: Լավ, իսկ ի՞նչ են արտադրության ծախքերը: Դրանք՝ գարձյալ ապրանքների, այսինքն՝ հում նյութի, մեքենաների, բանվարական ուժի և այլ գներն են: Մենք պետք ենորից հարց գնենք, թե ինչի՞ց են կախված նրանք:

Պարզ ե, վոր այս բացատրությունը վոչինչ չի տալիս: Նա ուղում և գինը գներով ել բացատրել: Ապրանքի գինը նա բացատրում է հում նյութի և մեքենաների գնով. իր հերթին, հում նյութի և մեքենաների գինը նա բացատրում և նրանց մշակման համար անհրաժեշտ արտադրության միջոցների գներով և այսպես անվերջ: Այս բացատրություն չի լինում, այլ պարզապես Պուտոսից ուղարկում են Պիղատոսի մոտ: Ակնհայտ ե, վոր այս հարցը հարկավոր և լուծել բոլորովին այլ կերպ մտենալով նրան, քան մենք փորձեցինք անել առաջ:

Մենք գիտենք, վոր աեթինիկական զարգացումը, մեքենաների և արտադրության յեղանակների լավացումը նշանակալի շափով իշխեցնում և ապրանքների գները: Յեթե մենք համեմատենք, որինակ, ձեռքով շինվող մեխի գինը մեքենայի ոգնությամբ արտադր-

վաղ մեխի գնի հետ, ապա միանդամայն մեր աչքին կը խփի նրանց խիստ զանազանությունը: Զեռքով շինվող մեխերը շատ ավելի թանկ եյին, քան մեքենայական յեղանակով մշակվող մեխերը: Մեխերի շինելու վրա առաջներն ավելի շատ ժամանակ ու աշխատանք եր ծախսվում, քան այժմ: Այս ել աղբում եր մեխերի գնի վրա: Կապիտալիստն առաջ պետք ե պահեր շատ բանվորներ, վորպեսզի պատրաստեր բավական քանակությումը մեր, այժմ պահում ե շատ ավելի քիչ: Բանվորական ձեռքերի վարձը, վոր կապիտալիստը հաշվում ե իրեւ մեխերի ինքնարժեքի մի մաս, այժմ քչանում ե, վորովհետի ամեն մի բանվոր սկսել ե մի քանի անգամ ավելի շուրջ մեխ պատրաստել և հետեւաբար, ամեն մի մեխի համար սկսել ե ավելի քիչ ծախք ընկնել բանվորների աշխատավարձի վրա^{*)}: Այս ել նպաստեց մեխերի գնի անկմանը:

Այսպիսով, այստեղ զիսավոր գերը խաղաց աշխատանքի արտադրողականության բարձրացումը: Այս մեզ այն մտքին ե բերում, վոր զինն ընդհանրապես կախված է ապրանքի մշակման վրա ծախսված աշխատաված:

Փորձենք ստուգել այս:

ԱՐԺԵՔ

Նախորդ գլխում մենք յեկանք այն յեղակացության, վոր զինը, ամենայն հավանականությամբ, կախված է այս կամ այն ապրանքի կամ իրի մշակման վրա ծախսված աշխատանքի բանկից:

^{*)} Այս կարելի յե ապարաբանել այսպիսի թվական որինակով. ասենք, որական, մեկ ոուրի աշխատավարձ ստացող բանվորը մշակում է մի որում 100 հատ ապրանք: Այս դեպքում կապիտալիստի ծախքը բանվորին վարձարելիս ապրանքի մեկ հատի համար հավասար է մեկ կոտեկի: Բայց յեթե բանվորի աշխատանքի արտադրողականությունը, նոր մեքենաների չնորհիվ, ավելանում է, որինակ, 10 անգամ, այն ժամանակ դրությունը փոխվում է: Այժմ բանվորը՝ 100 հատի փոխարեն մշակում է 1000 հատ, իսկ նրա աշխատավարձը մնացել է նախկինը: Այսպիսով, բանվորին վարձարելիս այժմ ապրանքի ամեն մի հատի վրա մշակված աշխատանքի գանգանությունը:

Յեթե մենք այժմ փորձենք այս տեսակետով նայել զանազան ապրանքների գներին, ապա այդ միայն կը հաստատի մեր յեղատեցությունը:

Իրաք, վորեն ձորում գտնվող կամքը և ավագը, վոչ մի գին չունեն: Բայց նրանք գինն են ստանում, յեթե նրանց հանում են ձորից ու բերում աղյուսի գործարանը: Էնչու գին ստացան նըրանք: Վորովհետեւ նրանց վրա ժարդիկային աշխատանք գործադրվեց: Ապա, այդ կամքից ու ավագից աղյուս են շինում ու թըրծում: Հետեւաբար, նրանց վրա ելի աշխատանք ծախսվեց: Արդյոք նրանց գինն ավելացա՞վ: Խարկե: Աղյուսները, այսինքն՝ վորոյ ձեռք վերամշակած կամն ու ավագը, շատ ավելի բարձր գին ունեն, քան սկզբնական հում կյութը: Բայց ահա այդ աղյուսներից տուն են կատուցում, այսինքն նրանց վրա ծախսում են ել ավելի շատ աշխատանք: Պարզ է, վոր այդ ավել աշխատանքը միանդամ ից աղյուսում է նաև նրանց գնի վրա: Աղյուսից շինած տունը, իհարկե, շատ ավելի թանկ է, քան նրա համար հարկավոր աղյուսները: Այս հասարակ որինակը շատ լավ պարզաբանում է, վոր ապրանքի գինը կախված է նրա մշակման վրա ծախսված աշխատանքի քանակից:

Այժմ մեղ համար պարզվում է, թե ինչու յերկաթի գինը շած է պղնձի գնից, իսկ պղնձի գինը՝ վոսկու գնից: Յերկաթի արդյունահանության վրա ավելի քիչ աշխատանք է ծախսվում, քան պղնձի արդյունահանության վրա և, իհարկե, ավելի քիչ, քան վոսկու արդյունահանության վրա: Մախսված աշխատանքի այս զանազանությունը վորոշում է նաև զների զանազանությունը:

Այս կամ այն ապրանքի մշակման համար անհրաժեշտ աշխատանքի քանակը կոչվում է նրա արժեքը: Իսկ ապրանքի գինն ապրանքի արժեքի արտեհքի արտահայտությունն է զրամով:

Այսպիսուրեմն, մենք յեկանք այն յեղակացության, վոր ապրանքի գինը կախված է նրա արժեքից, այսինքն նրա մեջ ամփոփված աշխատանքից: Բայց այստեղ հարց է ծագում՝ յեթե ապրանքի արժեքը նրա մեջ ամփոփված աշխատանքի քանակն է, ապա ակրնհայտ է, վոր անհմուտ աշխատաղը, պատրաստելով, որինակ, մի զույգ կոչեկ, նրա վրա ավելի շատ աշխատանք կը ծախսի և, հետեւաբար, ավելի մեծ արժեք կատաղի, քան իր գործում փորձված ու հմուտ կոչկակարը: Կարծեք թի, մենք պետք են այն յեղակացության գանք, վոր ստեղծագործ կոչկակարի կոչկի գինը

ավելի բարձր է, քան հմուտ կոչկարի կոչինը; Պարզ է, վոր այս անհեթեթություն է: Ինչպես դուրս դանք այս գժվարությունից:

Յեթք բավական պարզ է: Բանն այն է, վոր իրի աշխատանքային արժեքը վարոշվում է վոչ թե ամեն մի առանձին բանվորի աշխատանքի քանակով՝ կապված այդ բանվորի փորձվածության ու հմտության հետ, այլ այն միջին քանակով, վոր անհրաժեշտ և այդ իրի մշտկման համար: Ամեն մի զործարանում մենք տեսնում ենք, վոր բանվորների մի մասը քիչ ե փորձված ու ճարպիկ, մյուս մասը շատ և փորձված, իսկ մեծամասնությունը ներկայացնում է, այսպես կոչված, «վոսկե միջինը»: Սակավափորձների ու անհմտաների ճարպիկ չմինելը հավասարակշովում է առանձնապես աշքի ընկնդղ բանվորների ճարպիկությամբ և ընդհանուր առմամբ ամբողջ արտադրութեանությունը մատենում է «վոսկե միջինին»: Ահա այս միջին աշխատանքը, վոր անհրաժեշտ և իրի մշտկման համար, վորոշում է նաև արժեքի մեծությունը:

Բացի այդ, մենք գիտենք, վոր աշխատանքի արտադրութեանությունը կախված է արտադրության տեխնիկայից: Պարզ է, վոր ձեռքով պայտ շինող զարբինը, նրա վրա ավելի շատ աշխատանք է թափում, քան գործարանի բանվորը, վոր այդ պայտը շինում է մեխանիկական յեղանակով: Սակայն, սրբնից չի հետեւում, վոր դարբնի շինած պայտի արժեքն ավելի բարձր և գործարանի պայտի արժեքից: Այսուղ նույնպես հարկափոր և վորոշ միջին մեծություն վերցնել: Աշխատանքային ծախսումների այս միջին մեծությունը կախված է անինիկայի միջին մակարդակից: Յեթք պայտերի մեծամասնությունը մեխանիկորեն է մշտկում, ապա նրանց արժեքը կախված է այն միջին աշխատանքային ծախսումներից, այսինքն միջին ժամանակից, վոր պետք է ծախսել, վորպեսզի մեխանիկական յեղանակով և վոչ թե ձեռքով, այդ պայտերը շինենք:

Այս միջին աշխատանքի ժամանակը կոչվում է հասարակականորեն—անհրաժեշտ աշխատանքի ժամանակ:

Այսպես ուրեմն, այն տեսակետից, վորին մենք հանդեցինք, բոլոր ապրանքները ներկայացնում են մարդկային աշխատանքային հներդիայի ժամանակ արդյունքներ, աշխատանքի թանձրացումներ (ցցւերն): Ինչքան շատ հասարակականորեն—անհրաժեշտ աշխատանքի ժամանակ է ամփոփված ապրանքում, այնքան բարձր է նրա

արժեքը, այնքան ել բարձր է նրա գինը: Այս բացատրում է մեզ մի ուրիշ չափ կարեւը հարց, այն ե՛թե ինչու կարելի յե ամեն տեսակը և ամենաաղանապան ապրանքները համեմատել իրար հետ և փոխանակել:

Յեթք այսպես մոռածենք, անպա չափ տարրինակ կը թվա, վոր կարելի յե, որինակ, յերկաթը փոխանակել չթի հետ, չթի—հացի հետ, հացը—ծծմբաթթվի հետ, ծծմբաթթուն—ծխախոսի և այլն: Զե՞ վոր ամեն տեսակ փոխանակության ժամանակ զանազան իրեւրը հավասարեցվում են իրար: Ակնհայտ է, վոր յեթք չթը կարելի յե փոխանակել յերկաթի հետ (վաճառել չթ և զնել յերկաթ), նրանց միջին պետք է մի ընդհանուր բան լինի: Յերկաթի ու չթի արտաքին հատկությունների մեջ մենք չենք զանի այդ ընդհանուրը: Նրանց կշիռը տարբեր է, ամրությունը—նույնպես և այլն: Սակայն, նրանց իրար հավասարեցնելու հնարավորությունը (որինակ՝ հավասարեցնել այսպես—10 արշին չթը—1 ու 80 կ.—20 ֆ. յերկաթի) ցույց է տալիս, վոր նրանց մեջ մի ընդհանուր բան կա: Այդ ընդհանուրն ել հենց նրանց արժեքն է: Իրեւ արժեքներ բարոր տպրանքները հավասար են իրար: Բայց իրեւ իսկական իրեւ—նըրանք տարբեր են: Նրանց տարբեր վորակները, հատկությունները և առանձնահատկությունները ծառայում են մարդուն իր պահանջների բավարարման համար: Չթի հատկությունները մեկ են, յերկաթի հատկությունները—ուրիշ: Յեկ մեկը և մյուսները բավարարում են մարդու զանազան կարիքները: Յեկ ահա ապրանքների մարդկային կարիքները բավարարելու հատկությունը կոչվում է նրանց սպառողական արժեք, իսկ ապրանքների իրար հետ փոխանակվելու հատկությունը—կոչվում է նրանց փոխանակային արժեք:

Ապրանքները համեմատվում են, իհարկե, վոչ թե իրենց սպառողական արժեքներով, այլ փոխանակային: Սակայն, ապրանքի փոխանակային արժեքը չափ կարեւը զեր և ինազում: Շուկա կոչեկ գուրս բերող կոչկակարը չի հետաքրքրում նրա սպառողական արժեքով: Կոչիկը նրան հետաքրքրում է միայն իրեւ փոխանակային արժեքը: Կոչիկը վաճառելով, նա այն փոխանակում է հացի, մոի և այլնի հետ: Հետեւարար, նրան հետաքրքրում է հացի և մօի սպառողական արժեքը: Ծնդհակառակը, նա, ով նրանից զնում է կոչիկը, շահագրգոված է հենց նրա սպառողական արժեքով, նրա իր պահանջները բավարարելու ընդունակությունը: Նա կոչիկը փոր-

ձում ե , չափում ե այլն : Այս Հակաղրության շնորհիվ եր կատարվում ե գործարքը :

Ապրանքի սպառողական արժեքն ստեղծվում է աշխատանքի առանձին վորակների շնորհիվ (դերձակի աշխատանք, դարբնի և այլն) : Իսկ փոխանակայինն ստեղծվում է աշխատանքի ֆանակային ծախսումով : Վորակապես տարբեր աշխատանքը մենք միշտ կարող ենք համեմատել ծախսված ջանքերի քանակով*) : Ահա աշխատանքի հենց այս քանակական կողմն ե , վոր դեր ե խաղում փոխանակային արժեքի կաղմվելու գործում :

Ապրանքի փոխանակային արժեքը նրա մեջ ամփոփված վորոշ քանակությամբ աշխատանքն ե : Նա չափում ե առղքանքի մշակման համար անհրաժեշտ աշխատանքի ժամանակի քանակով : Այդ արժեքը, յերբ արտահայտվում է զբաժնով, կոչվում է զին : Յեզ այստեղ հարց ե ծագում, թե ինչու փոխանակային արժեքն արտօնակայում ե հենց զբաժնով և ի՞նչ գեր ե խաղում գրամք հասարակական անտեսության մեջ :

Պ Բ Ա Ս

Շուկայում մենք գործ ունենք ապրանքների վոչ թե զների, այլ արժեքների հետ : Վերևու մենք տասցինք, վոր զինն արժեքի դրամական արտահայտությունն ե : Ի՞նչ ե նշանակում այս :

Պարզության համար սկզբում յենթագրենք, վոր չուկայում չքննառության մեջ զանգազ ամբողջ զբաժնը վասկի յե (հետո կը դառնանք նաև թղթադրամներին : Մենք գիտենք, վոր տանք,

*) Այն հարցը, թե ինչպես համեմատել սեազործ բանվորի աշխատանքը և վորակյալ բանվորի աշխատանքն ըստ աշխատանքային եներդիքայի ծախսման քանակի գործի ժամանակ, լուծվում է բավական հասարակ ձևով : Ակտործ բանվորի աշխատանքը վոչ մի նախապատճենություն չի պահանջում : Այս պատճենով վորակյալ բանվորի աշխատանքի մեկ ժամը հավատար ե անվորակյալ բանվորի մեկ ու կես կամ 2 ժամին : Հաշիվն այստեղ այսպես ե — յենթագրենք մարդու աշխատանքի շրջանը համար ե 20 տարվա : Տարեկան 300 որ աշխատելով, մարդ կաշխատի ընդառնենք 6,000 որ : Բայց վորակյալ բանվորի համար պետք ե ամելացնել նաև

թաղիքե վոտնամաների (վալենու) գինը 3 ոտքի յե : Եյլ կերպ ասած , թաղիքե վոտնամաները կարելի յե հավասարացնել վոսկու գորոշ քանակի (մեր սրինակում—52 դոլյայի) : Իսկ ի՞նչն ե հնարավորություն տալիս թաղիքե վոտնամաները հավասարեցնել վոսկուն : Ի հարկե , վոչ թե այս յերկու ապրանքի սպառազական արժեքը, այլ նրանց փոխանակային արժեքը : Յե՛վ թաղիքե վոտնամաները, այլ վոսկին մարդկային աշխատանքի արդյունքները են , ընդուրում մի զույգ թաղիքե վոտնամանի մշակման վրա հարկավոր և ծախսել նույնքան աշխատանք, ինչքան 52 դոլյա վոսկու մշակման վրա : Մի զույգ թաղիքե վոտնամանի և 52 դոլյա վոսկու այս միատեսակ արժեքն ել հնարավորություն ե տալիս նրանց հավասարեցնել : Թաղիքե վոտնամաները կարելի յեր հավասարեցնել վորեւ այլ ապրանքի (յերկաթի, պղնձի և այլն) : Յեթե այն հավասարեցնում են հենց վոսկուն, ապա միայն վոսկու մի շարք առանձին հատկությունների շնորհիվ, վորոնք նրան այդ նպատակի համար ամենահարժարն են գարնուում :

Ի հարկե , մենք կարող ենք արժեքն արտահայտել, սրինակ , յերկաթով (ինչպես արտահայտում ենք հին հին չունասուանում), բայց այդ անհարժար կը լիներ : Ինչպիսի «քսակ» պետք ե ունենայինք մենք, վորպեսդի, ասենք, չուկա տանելյինք յերկու ոռւբլի յերկաթով : (Հին չունասուանում, յերբ յերկաթի արժեքը դեռ չուսրարձր եր և այն արդյունահանում ենք մեծ դժվարությամբ, հարյուր ոռւրլին յերկաթի գրամմական մեղափախելու համար պահանջվում եր յերեք ձի) : Վոսկին գրամմի նյութ գարձագ այն պատճառով , վոր նա 1) փոքրիկ կշռով ու ծագալով իր մեջ պարունակում ե շատ

ուսման շրջանը , ասենք , հինգ տարի կամ 1500 որ : Այսպիսամ , ըստապահում ե , վոր վորակյալ բանվորը իր իսկական աշխատանքի շրջանում (20 տարի) ողտագործում և ուսման շրջանում կուտակած աշխատանքը , և նրա ամբողջ աշխատանքը կը լինի 7500 բանվորական որ : Իսկ անվորակյալ բանվորինը կը լինի միայն 6000 բանվորական որ : Բանվորական որը 8 ժամ հաշվելով , կստանանք , վոր վորակյալ բանվորի 4 ժամը հավատար և սեազործ բանվորի 5 ժամին , այսինքն 1 ժամին մեջ վորակյալ բանվորն ստեղծում ե այնքան արժեք , ինչքան տեսպործ բանվորն ստեղծում ե 1 և մի քառորդ ժամուում :

աշխատանք, այսինքն նրա արժեքը մեծ է, 2) նրա մասերի բաժանելը հարմար է, 3) նու չի ժանդառում, ինչպես մյուս մետաղները եւ այլն*):

Վարպեսպի ամեն անդամ վաճառքի ու գնումի ժամանակ այս կամ այն քանակությամբ վոսկին չկը ունի (իսկ առաջներն այդպես եւ անում ելին), ոկտոբերին նրանից ստակ (մոնետա) կորել և պետությունն սկսեց յերաշխավորել այդ ստակներից ամեն մեկի կշիռը: Այսպիսով ել յերեսն յեկան մետաղեւ զրամները (զրամների անունները հաճախ պահում են հին կշռի նշանակումը—այսպես, Անդրիայում հիմնական զրամական միավորը կոչվում է փունտ ստերլինգ, և նրա արտահայտած արժեքն առաջները հավասար եր մեկ փունտ արծաթի, ֆրանսիայում նույնպիսի զրամական միավոր եր մվլը, վոր ելի կը ու չափ ե):

Իուրո ապրանքները զրամի մեջ գտնում են իրենց արժեքի արտահայտությունը: Դրամը ծառայում է արժեքի համար իրեն չափանիչ: Այս պատճառով չուկայում զնումի ու վաճառքի ժամանակ միշտ գործ անեն վոչ թե արժեքների, այլ նրանց զրամական արտահայտության—զների հետ: Դրամն ստակի ձեռվ ել թագավորում և չուկայում:

Մենք սկզբում ասացինք, վոր զրամի եյությունը բացատրելու համար ստիպված ենք յենթողելու, թե չուկայում չըջանառության մեջ գտնվող ամբողջ զրամը վոսկի յէ: Սակայն, մենք լավ գիտենք, վոր իրոք չուկայում միշտ չառ թղթադրամ և լինում: Յեթե հեշտ և բացատրել ապրանքի հավասարեցումը վոսկի գրամին, վորովհետեւ վոսկի զրամի ու ապրանքի արժեքը միատեսակ է, առանչութեան բացատրել այն հանգամանքը, վոր ապրանքները կարելի յէ չափարեցնել թղթի կտորներին, վորոնց արժեքը, ի հարկե, չառ փոքր է:

Այս հարցի պատասխանը տալիս է այն գերը, վոր զրամը խաղում և չուկայում: Այդ գերը հանգում է այն բանին, վոր զրամը փոխանակության ժամանակ միջնորդ և հանդիսանում: Մեկ ապ-

*). Դրամ, այսինքն ընդհանուր փոխանակային ապրանք յեղել են յերեխն անառաւները, յերեխն գաղանների մորթերը: Մեզ մոտ ուսկմական կոմմանիզմի տարբիներում, յեր թղթադրամը գին չուտեղը, այդպիսի զրամական ապրանք եր գտնում աղը:

Րանքը մյուսի հետ փոխանակել ցանկանալով, մենք այդ անում ենք դրամի միջոցով: Դրամն այստեղ հանդիսանում է միայն միջնական մի ողակ: Յերբ զրամը ստակի ձեւ ստացավ, մենք այլու չենք առաքրքավում նրա իսկական արժեքով: Ստակները մեզ համար կարենու են իրեն արժեքին նշան: Տաս ոռոգանոց վոսկին կարող է 174,28 դոլյայից պակաս կշիռությունը յերաշխավորել ե, վոր ինքը միշտ այդ վոսկին փոխանակում է լիարժեքի հետ, յեթե ստակի ձեւը վոսկու վորոշ արժեքի ներկայացուցիչ լինելու իրավունք է ապահովել: ապա նրա իսկական արժեքը կարող է մի քիչ ել պակաս լինել: Ստակի ձեւն ապահուվում է մետաղի կառների վորոշ արժեքի ներկայացուցիչներ լինելու իրավունքը: Բայց չե՞ վոր նույնպիսի ներկայացուցիչներ կարող են լինել նաև թղթերը, յեթե միայն յերաշխավորի, վոր նրանք ուղած մոմենտում կարող են փոխանակվել վոսկուն: Այստեղից ել սկիզբ են առնում թղթադրամները:

Ի հարկե, թղթադրամները տարբերվում են վոսկի գրամներից և նրանց գործունեյության ասպարեզը չառ ալելի նեղ է, քան վոսկի զրամների գործունեյության ասպարեզը: Միջազգային հաշվեհարդարների ժամանակ, որինակ, հաշիվը միշտ կատարվում է վոսկով և վոչ թե թղթով: Սակայն, ներքին շուկայում վոսկու մեղ գեր են խաղում:

Այն որենքները, վորոնց յենթարկվում են թղթադրամները, նույնպես տարբերվում են վոսկի զրամների որենքներից: Վոսկի զրամների այն քանակությունը, վոր անհրաժեշտ է, վորպեսզի չուկայում ապրանքների չըջանառությունն անարգել կատարվի, կախված և չուկայի ապրանքների քանակությունից, նրանց չըջանառության արագությունից և զրամի չըջանառության արագությունից: Ինչքան չառ տալիսնք կա չուկայում չըջանառության մեջ, այնքան չառ ել գերած և պահանջվում: Ինչքան արագ են զրամները չըջանառություն կատարում, այնքան ել քիչ են պահանջվում նըրանք: Յեթե չուկայի յէ թղթնված ավելի շատ վոսկի զրամ, քան այդ պահանջվում է չըջանառության համար, ապա նրա մի մասը մնում է բանկերում կամ թագնվում արկղներում: Բայց նրանից ամեն մի առանձին ստակի արժեքը չի պակապում: Բոլորովին այլ ե թղթադրամի գրությունը:

թղթաղբամները վոսկու ներկայացուցիչներն են, չուկայում փոխարինում են նրան: Պարզ է, վոր նրանց քանակը չտեսք և զերպանցն չուկայի համար անհրաժեշտ վոսկե դրամների քանակը: Յեթե թղթաղբամ հենց այնքան և բաց թողնված, ինչքան հարկա-վոր և վոսկին փոխարինելու համար, ապա թղթաղբամի ուռըլու դնորդական ուժին: Բայց յեթե թղթաղբամ յերկու անդամ ամելի յէ բաց թողնված, քան շրջանառության համար անհրաժեշտ և վոսկի, այն ժամանակ նրա դնորդական ընդունակությունը յերկու անդամ ընկնում է, վո-րովհետև թղթաղբամը միայն փոխարինում է վոսկե դրամին: Թրղ-թաղբամներին այդ ամերով գումարով կարելի կը լինի զնել միայն այն, ինչ կարելի կը լիներ զնել մի վոսկով: Այս գեղքում թղթա-ղբամի մեկ ուռըլին հավասար կը լինի վոսկու հիսուն կոտեկին:

Մենք Խորհրդային Միության մեջ շատ լավ կարող եյինք դի-մել այս պատկերը: Իմպերիալիստական ու քաղաքացիական պա-տերազմի ազգեցության տակ մեր արտադրությունը ստատիկ կը ը-դատվում եր, և չուկայում շրջանառություն կատարող ապրանք-ների քանակը՝ իշխանում: Այս նշանակում եր, վոր չուկային հար-հավոր և ավելի քիչ վոսկե դրամ, քան առաջները: Վոսկու փո-խարեն մեջ մոտ շրջանառության մեջ եյին միայն թղթաղբամներ, ընդ զորում, նաև դանակու շարունակ մհձաւ ուժ եր: Իսկ յուրա-վետեն թղթաղբամները պետք ե փոխարինելին վոսկե դրամներին, այդ պատճառով նրանց գնորդական ուժն սկսեց արագ ընկնել: Հե-տեանքն այն յեղավ, վոր մենք սկսեցինք հաշվել միլիոններով ու միլիոններով, վորոնց գնորդական ուժը հավասար եր կողեկների և ուռըլիների:

Խորհրդային իշխանության կատարած դրամական ունիորմը կայանում եր նրանում, վոր արժեքազուրկ թղթաղբամների փո-խարեն բաց թողնվեցին նորերը—չերպոնեցները—վորոնք յերաշխա-վորված եյին վոսկով: Այդ չերպոնեցներն այն հաշվով բաց թող-նվեցին, վորպեսզի նրանց քանակը չը գերազանցի չուկային ան-հրաժեշտ վոսկե դրամների քանակը: Սրա չորհիվ դրամի անկումը դադարեց և չերպոնեցը հաստատուն վայրուտա դուրս յեկավ:

Իհարկե, յեթե այժմ խորհրդային կառավարությունն ոկոխ չերպոնեցներ բաց թողնել, չհամակերպվելով չուկայի անժամն ու

արտադրության ընդլայնմանը, այն ժամանակ նրանք ել կոկոն ընկնել: Բայց բաց թողնված չելվոնեցների քանակը չի անցնում չուկայի հարկազոր վոսկե ուռըլիների քանակի սահմանից այն կողմը: Այս պատճառով ել չերպոնեցը չի ընկնում: Իսկ նրա գնոր-դական ընդունակությունը կախված է այն բանից, վոր նա հան-դիսանում է վոսկե ուռըլու ներկայացուցիչն ու տեղակալը:

ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵԿ

Կապիտալիստը վարում է իր գործը, վորպեսզի շահույթ ստա-նա: Իր գործարաններում ազրանք արտադրելով, նա այն վաճա-ռում է չուկայում: Այդ վաճառքը ծածկում է նրա ծախքերը և նը-րան տալիս նաև վորու լրացուցիչ գումար—շահույթ: Վո՞րտեղից ե ստացվում այդ շահույթը:

Մենք գիտենք, վոր ապրանքների գինը նրանց՝ դրամով ար-տահայտված՝ աշխատանքներին արժեքն է: Ապրանքները վաճառ-վում են իրենց արժեքով: Իսկ ինչպես և հնարավոր լինում շա-հույթ ստանալ այստեղ:

Շահույթը չի կարող ստեղծվել առեմրում: Զի կարող այն պատճառով, վոր ապրանքները վաճառվում են իրենց արժեքին հա-մապատասխանող գնով: Յեթե ապրանք վաճառելով, կապիտա-լիստաները նրա վրա արժեքից բացի հավելում չեն յին, ապա նրանք շահույթ ստանալով իրեւ վաճառողներ, այն կը կորցնեյին իրեւ գնորդներ (հում նյութ, մեքենաներ և այլն գնելով): Այն ժամա-նակ կատացվեր, վոր կապիտալիստ դասակարգն առհասարակ յե-կամուտի վոչ մի աղբյուր չունի: Սակայն, մենք գիտենք, վոր իրոք կապիտալիստ դասակարգի յեկամուտը շատ մեծ է: Այս պատ-ճառով մենք պետք ե յենթաղբենք, վոր կապիտալիստ դասակարգի շահույթն առեմրում չի ստեղծվում:

Կապիտալիստ դասակարգի յեկամուտը կախված է ինչ-վոր պատճառներից, վորոնք պայմանավորված են հենց արտադրու-թյունով: Փորձենք ըմբռնել այդ պատճառները:

Կապիտալիստը բանվորական ուժ է գնում չուկայում: Այդ բանվորական ուժի գինն աշխատավարձն է: Ինչի՞ց և կախված աշ-խատավարձի բարձրությունը, այսինքն բանվորական ուժի գինը: Օրս արժեքից, ինչպես ամեն տեսակ ապրանքին է: Իսկ ի՞նչ է

բանվորական ուժի արժեքը։ Այդ այն ապրանքների արժեքն է, վորոնք հարկավոր են բանվորին պահելու և պաշտպանելու այն մակարդակի վրա, վոր նա կարողանա աշխատել։ Ուրիշ խոսքով, բանվորական ուժի արժեքը կազմվում է բանվորի սպառման համար անհրաժեշտ առլրանքների արժեքից։ Այն աշխատանքը, վոր հասարակությանը ծախսում է բանվորին հարկավոր Փիղիքական մակարդակի վրա պահելու և պաշտպանելու համար, վորոշում և նաև նրա բանվորական ուժի արժեքը։

Կապիտալիստը բանվորական ուժն ըստ իր արժեքի գենլով, սպառում ե այն, այսինքն հարկազրում ե բանվորին աշխատել։ Աշխատանքի պրոցենը կապիտալիստի կողմից բանվորական ուժի սպառման պրցեն է։ Աշխատանքի պրոցենում բանվորն ստեղծում է նոր արժեք, այսինքն հում նյութին ավելացնում և աշխատանքի նոր բաժին։ Բանվորի աշխատանքի արդյունքի արժեքն ավելի բարձր և հում նյութի արժեքից։ Բանվորը հում նյութին ավելացնելով իր աշխատանքը, մեծացնում է նրա արժեքը։ Մենք այժմ հարցում ենք՝ արդյուք հավասար ե բանվորի ստեղծած նոր արժեքը նրա բանվորական ուժի արժեքին։ Յեթե հավասար լիներ, ապա կապիտալիստը պատրաստ ապրանքն իր արժեքով վաճառելով, վոչինչ չեր ստանա։ Կապիտալիստը վճարելով բանվորին նրա բանվորական ուժի արժեքը, բանվորից կտանար հավասար հատուցում աշխատանքի արդյունքով։ Նա վոչ մի շահույթ չեր ունենա։

Բայց իրոք, բանվորն աշխատելով՝ ստեղծում է ավելի մեծ արժեք, քան իր բանվորական ուժի արժեքն է։ Այս պատճառով կապիտալիստն ստանում է վորոշ ավելարժեք, վոր հասնում է նրան ձբիքար։ Բանվորի աշխատանքի արդյունքի արժեքի և նրա բանվորական ուժի արժեքի միջև յեղած այս տարբերությունը կոչում է հավելյալ արժեք։

Պարզենք այս մի հասարակ որինակով։ Յենթագրենք, վոր աշխատանքի մի ժամանակով արժակայացված՝ մեկ ոռություն արժեք։ Յենթագրենք նույնպես, վոր բանվորական ուժի որական արժեքը (այսինքն այն ապրանքների, վորոնք անհրաժեշտ են բանվորի կյանքը պահպանելու համար) հավասար և աշխատանքի չորս ժամից։ Այն ժամանակ նրա գինը հավասար է 4 ոռություն։ Կապիտալիստն որսկան չորս ոռություն կնում է բան-

վորական ուժը և բանվորին հարկազրում ե աշխատել որական 8 ժամ։ 8 ժամում ստեղծում է 8 ժամվա աշխատանքի հավասար արժեք։ Այսպիսով, կապիտալիստը բանվորից ստանում է 4 ժամվա աշխատանք, վորի ժամանակ բանվորը հատուցանում է (այսինքն վերադարձնում է տնտեսատիրոջը) իր բանվորական ուժի գինը, և 4 ժամվա աշխատանք, վորի ժամանակ բանվորը ձբիքար արժեք և ստեղծում կապիտալիստի համար։ Առաջին չորս ժամը կկոչվի անիրաժեշտ աշխատանքի ժամանակ, յերկրորդը՝ հավելյալ աշխատանքի ժամանակ։ Այս հավելյալ աշխատանքի ժամանակի ժամանակ ստեղծում է կապիտալիստի համար նոր, կապիտալիստի կողմից չվարձատրված, արժեք։ Մեր որինակում այն հավասար է 4 ժամի։ Այս արժեքին ել կոչում է հավելյալ արժեք։ Այս հավելյալ արժեքի վաճառքը կապիտալիստին տալիս է չորս ոռություն զուտ ոգուտ։

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր կապիտալիստի շահույթն ստեղծվում է այն բանի չնորհիվ, վոր նա շահագործում է բանվորին։ Նա ձրի յուրացնում է բանվորի աշխատանքի արդյունքի մի մասը։ Այս յուրացրած արդյունքի վաճառքն ել կազմում է նրա յեկամուտի աղբյուրը։

Գործարանատիրոջ ամբողջ կապիտալը, այս տեսակետից, մենք կարող ենք յերկու մասի բաժանել։ Կապիտալի մի մասը, վոր ամփոփված է հում նյութի մեքնաների և այլի մեջ, արտադրության պրոցենում, իբրև արժեք, չի փոխվում։ Ամորտիզացիան* պարզապես ավելացնում են արտադրվող ապրանքի արժեքն։ Իսկ կապիտալի այն մասը, վոր ամփոփված է աշխատավարձում, աճելու հատկություն ունի, վորովհետեւ աշխատավարձի վրա ծախոված դրամը բանվորը վոչ միայն հատուցանում է, այև, բացի դրանից, ստեղծում է նոր արդյունք, վորի համար չի վարձատրվում։ Կապիտալի առաջն մասն անվանում են մշտական կապիտալ, իսկ յերկրորդը՝ փոփոխական կապիտալ։

Պարզ է, վոր ինչքան մեծ է գործարանատիրոջ փոփոխական կապիտալալը, այլ խոսքով, ինչքան շատ բանվոր է զրայված կապիտալիստի մոտ, այնքան ավելի շատ և նրա ստացած հավելյալ արժեքը, նշանակում է նաև շահույթը։ Այս պատճառով բոլոր կապիտալիստները ձգտում են լայնացնել իրենց արտադրությունը։

*) Այսինքն ծախոված կապիտալի շիջուցում։

Պարզ է նույնպես, վոր կապիտալիստն ուղում ե բոլոր հնարավոր միջոցներով մեծացնել բանվորի շահագործությը, այսինքն նրանից քամել ավելի շատ հավելյալ աշխատանք։ Այս կարելի յենել յերկու յեղանակառով՝ ա) բանվորական որը յերկարացնելով և բ) անհրաժեշտ աշխատանքի ժամանակը քչացնելով։

Բանվորական որը յերկարացնելը հանդիպում ե մի չարք արգելվների։ Բանվորները կազմակերպված ձեռվ (արհեստակցական միությունների միջոցով) պայքարում են ավելի կարճ որվահամար։ Ինչքան ավելի ուժեղ ե զարգանում կապիտալիզմը, այնքան ավելի ուժեղ ու կազմակերպված ե զառնում բանվորական շարժումը։ Այս պատճառով կապիտալիստները հարկադրված են ռահմանափակել իրենց ախորժակները և կրծատել բանվորական որը։

Անհրաժեշտ աշխատանքի ժամանակը քչացնելուն հասնում են բանվորական ուժի արժեքի քչացման միջոցով։ Այդ արժեքը կարելի յեն քչացնել, այն ապրանքների արժեքը իջեցնելով, վոր սպառում ե բանվորը։ Տեսնիկական լավացումները և աշխատանքի արտադրողականության բարձրացումն արդյունաբերության այն ճյուղերում, վորոնք պատրաստում են մասսայական սպառման առարկաներ, այսպիսով, մեծ նշանակություն ունեն կապիտալիստ ստացած հավելյալ արժեքի մեծացման գործում։ Աշխատանքի արտադրողականության բարձրացումը ցածրացնում է ավրանքների արժեքը։ Իսկ ավրանքների արժեքի այս ցածրացումը նշանակում է նաև բանվորական ուժի արժեքի ցածրացում։ Հետևանքն այն ելինում, վոր անհրաժեշտ աշխատանքի ժամանակը քչանում ե, իսկ հոգելյալինն աճում ե նրա հաշվին։

ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Այսպես ուրեմն, գործարանատիրոջ յեկամուտի, նրա շահույթի հիմքը նրա յուրացրած հավելյալ արդյունքն է։ Բայց վո՞րտեղից ե ստանում իր շահույթն առևտրականը։ Վո՞րտեղից ե սկիզբ առնում բանկերի ստացած առկուսը և հոգատերերի ստացած սենառան։ Կարծէք թե վո՞չ առետրականը, վո՞չ բանկերը, վո՞չ ել հողատերն անմիջական կապ չունեն արտադրության հետ և չեն կարող հավելյալ արժեք հափշտակել։ Սակայն, իրոք բանն այդ-

պես չեն։ Ամբողջ կապիտալիստ դասակարգի յեկամուտները կախված են հավելյալ արժեքից։

Գործարանատերը, վոր հավելյալ արժեքն ստանում ե ապրանքի ձեռվ և շուկայում այն վերածում է գրամի, ըստորն իրեն չի պահում։ Ամենից առաջ նա պետք է իր ապրանքը վաճառի սուբականին արժեքից մի քիչ ցածր (մեծածախս գնով)։ Իսկ առելարականը, վոր վաճառում է ապրանքն իր արժեքով, այդպիսով ստանում ե իր բաժին շահույթը։ Այս կապիտալիստը տալիս է իր հավելյալ արժեքի մի մասը բանկերին իրեն առկուս նրա չնորհած կապիտալի։ Այսպիս հավելյալ արժեքի մի մասն ընկնում ե բանկերի ձեռքը։ Վերջապես հողատերերի ունատան նույնպես կազմվում ե հավելյալ արժեքից։ Գործարանատերն այն վճարում է հողից ողտվելու համար։ Հետևանքն այն ելինում, վոր ամբողջ հավելյալ արժեքից գործարանատիրոջը մնում է միայն նրա համեմատաբար փոքրիկ մասը։

Հավելյալ արժեքի այսպիսի բաշխումը կապիտալիստ դասակարգի անդամների մեջ, իհարկե, խաղաղ չի կատարվում։ Կապիտալիստների զանազան խմբակների միջև մշտական պայքար և տեղի ունենում հավելյալ արժեքի իրենց հասնող բաժինը մեծացնելու համար։ Գործարանատերը, որինակ, ինքն է սկսում կազմակերպել մանկածախս առելատուրը։ Այս յեղանակով նրան հաջողվում է իրեն պահել հավելյալ արժեքի այն մասը, վոր առաջ հասնում եր առելարականին։ Բանկերը նույնպես չանում ե մեծացնել իր բաժինը։ Նա սկսում է ինքը կազմակերպել արտադրությունը և, այդպիսով, ստանալ վոչ թե հավելյալ արժեքի մի մասը, այլ բոլորը։

Հավելյալ արժեքը հանդիսում է կապիտալիստ դասակարգի դոյցության հիմքը։ Այդ դասակարգի անդամների բոլոր յեկամուտները նրկայացնում են հավելյալ արժեքի հետեանքը։ Կապիտալիստների դասակարգն այդ հավելյալ արժեքով պահում է այն բոլորը, ինչ նրան հարկավոր է իր արտադրությունն ամբողջներու համար։

Նա հավելյալ արժեքի մի մասը իրեն հարկ տալիս է պետությանը, և այդ մասը գործադրովում է կապիտալիստների տիրապետությունը պաշտպանող պետական չինովնիկական ու ուղարմական ապարատը պահելու վրա։ Նրա մի մասը նա տալիս է տիր-

տերներին, վորպեսզի նրանք աշխատավոր ժամաների մեջ ադիտացիս անեն կապիտալիստների ուժուն: Նրա վորոշ ժամասը նահատկացնում է և այն բանին, վորպեսզի ուսումնական հիմնարկներ պահի, վորտեղ քարոզեն բուրժուական հայտցքներ և ուժուրեցնեն բուրժուական դիտություն:

Այս պատճառով ամերող կապիտալիստական հասարակությունը կարելի յերածնել յերկու մասի, այն ե՝ մի մաս, վոր ապրում է անձնական աշխատանքով և ստեղծում է արժեքներ և մի մաս, վոր նոր արժեքներ չստեղծելով, ապրում է հավելվալ արժեքի հաշվին: Հավելյալ արժեք ստեղծող աշխատանքը կոչվում է արտադրական աշխատանք, իսկ այն աշխատանքը, վոր համելյալ արժեք չի ստեղծում՝ անարտադրական աշխատանք:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Վերեւում ասացինք, վոր աշխատավարձը բանվորական ուժի գինն է: Այդ գինը նրա արժեքի արտահայտությունն ե՝ դրամական ձևով: Իսկ բանվորական ուժի արժեքը կախված է այն ապահովների արժեքից, վորոնք անհրաժեշտ են բնավորի սպառման գոյության համար:

Հիմա դուք մի շաբաթ հարցեր կտաք.

Կապիտալիստը չի ձգտում իջեցնել աշխատավարձը, վորքան այդ հնարավոր է: Աշխատավարձը չի կարող բանվորական ուժի իսկական գնից ավելի ցածր լինել, յեթե կապիտալիստին հաջողվի բանվորների ընդդիմությունը կուրել: Յեվ ընդհակառակը, միթե հաջող գործադրությունը միջոցով ու իրենց կազմակերպիւածութե հաջող գործադրությունը միջոցով ու իրենց կազմակերպիւածությամբ բանվորները չեն կարող աշխատավարձն այնքան բարձրացնել, վոր դա գերազանցի բանվորական ուժի իսկական արժեքին: Փորձենք այս հարցերը լուծել:

Կապիտալիստը ձգտում է բանվորի աշխատավարձն իջեցնել, վորքան այդ հնարավոր է: Բայց հարց ե առաջ դալիս, թէ արդյոք նա կարո՞ղ է յերկարաւու ժամանակ աշխատավարձն այնպիսի դյոք նա կարո՞ղ է յերկարաւու ժամանակ աշխատավարձն այնպիսի մակարդակի վրա պահել, վոր դա բանվորական ուժի արժեքից ցածր մակարդակի վրա պահել, վոր դա բանվորական ուժի արժեքից ցածր մինի: Կապիտալիստական հասարակության մեխանիկան հենց ինքն այնպիս է, վոր դա անկարելի յե անել: Յեթե աշխատավարձը ինքն այնպիս է, վոր դա անկարելի յերկար ժամանակում է անդամների կարողությունը: Այլ հանդիպում, յերեք աշխատավարձը բանվորական ուժի արժեքից ցածր ե իջնում:

Կարդակի վրա յե դանվում, այդ նշանակում է, վոր բանվորը չի կարող բավարարություն տալ իր բոլոր պահանջներին: Նա կուշտ չի ուտում, վատ է հապնվում, նրա որդանիզմը քայլայփում է, նրա աշխատանքի արտադրողականությունն ընկում է, ընկում է նույսիւս նրա աշխատանակությունը և այլն: Փաստեր շատ կան: Հիշեք քաղաքացիական կոփների ժամանակները, յերբ աշխատավարձը բանվորական ուժի արժեքից ցածր դածր եր: Արդյունաբերությունն այն ժամանակ կանդ եր առել, կամ մի կերպ քարշ եր գալիս, վորովհետեւ նրա ամենապլիսավոր բաղկացուցիչ ուժերից մեկը—այսինքն բանվորը—անկման վիճակի յեր հասել:

Ճիշտ նույն դրությունը կատեղմիւր, յեթե կապիտալիստաներն աշխատավարձը շատ ցածրացնելին: Կապիտալիստական արտադրությունն անհնար և առանց պրոլետարիատի: Այդ պատճառով ել կապիտալիստները չեն կարող պրոլետարիատին այնպիսի վիճակի մեջ դնել, վոր նա վերջնականակես քայլայլի: Նրանք պետք ե այդ պրոլետարիատին տան հասարակական արդյունքի բավականաչափ մասը՝ վորպես աշխատավարձ: Այդ մասը պետք է լինի այնքան, վոր բանվոր դասակարգը կարողանա վերականգնել իր ուժերը, կամ, ինչպես ասում են կարողանա վերաբարձրել իրեն: Հասկանելի յե, այսակ բանը միայն այն չե, վոր բանվորը վերականգնի միայն իր սեփական ուժերը, վոր ծախսել և աշխատանքի պրոցեսի ընթացքում, այլ և այն ե, վոր նա ապահովի նաև իր փոխարինողին, վորպեսզի վերջնու բռնի իր տեղն այն ժամանակ, յերբ ինքը շարքից դուրս կդա: Այլ խոսքերով, աշխատավարձը պետք է ծածկի վոչ միայն բանվորի իր անհրաժեշտ կարիքները, այլ և իր ընտանիքի անաշխատունակ անդամների կարիքները: Այլպես բանվոր դասակարգը ինքն իրեն չի կարող վերաբարձրել:

Այդպիսով կապիտալիստները կամա թե ակամա պետք է բանվորներին այնպիսի վարձ տան, վոր այդ վարձը բավարարի բանվորների բոլոր կարիքներին: Համարկե, հաճախ պատահում է, վոր աշխատավարձը բանվորական ուժի արժեքից ցածր ե իջնում: Բայց այդ շեղումը միշտ հավասարակշռվում է հակառակով, այսինքն՝ այն դեպքերով, յերբ աշխատավարձը բանվորական ուժի արժեքից վեր ե բարձրացնում: Ընդհանուր առմամբ այդ տառապահությունը կատարվում են վորոշ մակարդակի շուրջը (ինչպես նույները ժամանակ բանվորի բանվորական ուժի արժեքից ցածր մա-

այլ ապրանքների գները), վորք հենց հանդիսանում է՝ բանվորական ուժի արտահայտությունը:

Իիշջւ աշխատավարձը կապիտալիստական հասարակության մեջ չի կարող բարձրանալ բանվորական ուժի արժեքից վեր և ձեռկան կերպով այդ բարձր մակարդակի վրա մնալ: Բանվորները խիստ շահագրգուփած են, վոր ավելանա հաօարակական արդյունքի իրենց բաժինը, վորն ստում են նրանք աշխատավարձի ձեռվ: Այդ ավելացման համար նրանք պայքար են մզում ամենավճռական յեղանկով: Արհետակցական ամբողջ շարժումը զգալի չափով հենց այդ նպատակն է հետապնդում: Թվում ե, թե ուժեղ կազմակերպածության, ուժեղ արհմիություններ ունենալու և վճռական պայքար մզելու դեպքում բանվորները կարող են գործադուլների, յելույթների և այլ միջոցներով ստիպել, վոր իրենց աշխատավարձը բարձրացվի: Կապիտալիստներն ստիպված կլինելին այդ անել:

Սակայն, այդ տեղի չի ունենում: Իրականության մեջ միայն առանձնապես բարենպաստ պայմանները (արդյունաբերական վերելք, բանվոր ճեռքերի պակասը և այլն) թույլ են տալիս բանվորներին, վոր իրենց աշխատավարձը համեմատաբար վեր բարձրացնեն: Բայց այդ դեպքերումն ել աշխատավարձը չի կարող յերկար ժամանակ պահպել բարձր մակարդակի վրա: Տնտեսական պայմանների փոխվելը (վերելիք թուլացում, գործադուրկ բանվորների թվի ավելացում և այլն) իսկույն ազդում և նաև աշխատավարձի վրա:

Ինչպես ել կազմակերպված լինի բանվորական շարժումը, ինչքան ել ուժեղ լինեն արհետակցական միությունները, այնուամենախիլ կատարական պահումներում և ան ժորդութիւնում պահումը մասը արհմիությունները չեն լնդդրկում: Տնտեսապես քայլայված բոլոր արհետավորներն ու գյուղացիք, վորոնք նոր են բանվոր դարձել, բազմաթիվ հին բանվորները, վորոնք գեռ չեն աղատավրվել «բարեգործ տիրոջ» վերաբերմամբ ունեցած բուրժուական հայացքներից, բազմաթիվ հետամնաց բանվորներ և վերջապես, բուրժուազիայի կողմից պահվող չարեցիրեխերները (գործադուրկները խանգարողները), չեն, վոր այդ բոլորը ջախջախում են արհմիություններին— կազմակերպված բանվորների բուրժոր ջանքերը: Բացի այդ, գործադուրկները՝ պայքարի զիսավոր

միջոցը—չեն կարող յերկար տեղել, վորովհետեւ գործադուրկ ժամանակաշրջանում բանվորները քաղց ու ամեն տեսակ զրկանքներ են կրում: Յեթև անտեսական պայմաններն այնպես չեն դասավորված, վոր կապիտալիստը կարիք ունենա շտապ կերպով առաջ տանել իր արտադրությունը, —այդ գեղղում անկարող և համենայն գեղու ավելի շատ գեմանալ, քան բանվորները: Վերջի վերջո սովոն ստիպում է բանվորներին համաձայնել կապիտալիստի պայմաններին, ու հաղթանակն՝ այդպիսով, կապիտալիստն է տանում*):

Այդպիսով կապիտալիստական հասարակության մեջ աշխատավարձն ընդհանրապես պահպան և այնպիսի մակարդակի վրա, վոր գրանով գնված արդյունքը հազիվ բավարարում է բանվորի կարիքներին: Բայց այս կետում ուրիշ հարց է առաջ գալիս: Մենք գիտենք, վոր բանվորների զանազան կատեգորիաների աշխատավարձի մակարդակը նույնը չե: Վորակավոր բանվորն ստանում է ավելի, քան վորակ չունեցողը, ու վորքան վորակի տարբերությունը մեծ է, այնքան ել մեծ և աշխատավարձի տարբերությունը: Հարց է առաջ գալիս՝ արդյոք դա վորեւ կապ ունի բանվորական ուժի արժեքի հետ:

Այդ հարցին պատասխանելու համար մենք չպետք է հիշենք հասարակ և վորակալ աշխատավարձի միջն յեղած տարբերությունը: Յերբ մենք խոսում ենք արժեքի մասին, մասնանշե-

*) Սակայն, յերբեմն ժամանակաշրջաններ են յեղել, յերբ աշխատավարձը միջն մակարդակից բարձր ու ցածր և կանոնած մընացել բավական յերկար ժամանակ՝ վորոց պայմաններում ու բանվորների վորոց խմբի վերաբերմամբ: Այլահետ, Անդիլայում, անցյալ դարի սկզբին բանվորների մեծամասնության վիճակը սարսափելի յեր: Նրանք բացահայտ կերպով այլասերվում ենին, իսկ կապիտալը դրանց փոխարինում եր քայլայված արհետավորներով: Բնդհակառակը, 19-րդ դարի յերկորդ կեսին, յերբ անդպիսական կապիտալիստները համաշխարհային առելելու մեջանորհը համարյա ամբողջովին իրենց ձեռքն ենին զցել և հակայական ոգուաներ ենին ստանում, բանվորների զգալի մասին հաջողվեց յերկար ժամանակ այնպիսի աշխատավարձ ստանալ, վոր միջինից շատ բարձր եր:

ցինք, վոր վորակյալ բանվորը մի ժամկա աշխատանքով ավելի արժեք ե ստեղծում, քան հասարակ բանվորը։ Մենք դա բացատրեցինք նրանով, վոր վորակյալ աշխատանքը վորոշ նախապատրաստություն, վարժություն, նախնական ուսուցում ե պահանջում։ Պարզ ե, վոր այդ ուսուցումը բանվորից վորոշ նյութական ծախսեր ե պահանջում։ Բացի այդ, իր վորակը հարկ յեղած բարձրության վրա պահելու համար, վորակյալ բանվորը պետք ե բավարարի մի չարք լրացուցիչ կարիքների վորակիք չունի անեագործ բանվորը, կամ վորոնց բավարարումը պարագայի չե (կապիտալիզմի տեսակետով) նրա համար։ Այդպիս, որինակ, վորակյալ բանվորը պետք ե գրադեմ լինի ու վորքան ավելի բարձր ե նրա վորակը, այնքան ել նրա գրագիտությունը բարձր պետք ե լինի։ Խոկ գրագիտությունը պետք ե պահպանվի մշտական ընթերցանությամբ։ Այս կերպ վորակյալ բանվորը պարագայով լրագրի, գրքի և այլնի կարիք ե գտում (այդպիսի կարիք սեղագործ բանվորն ել կարող ե ունենալ, բայց դրա բավարարումը, կապիտալիստական արտադրության տեսակետով, բանվորի համար անհրաժեշտ չե)։ Բացի այդ, վորակավորումը մշտական կատարելագործում ու լրացում ե պահանջում։ Բանվորը պետք ե հաճախի տեխնիկական թասընթացներ, լրացնի իր գիտելիքների պաշարը և այլն։ Այդ բոլորն, այսպիսով, բանվորի կարիքների շրջանն ընդլայնում է։ Բացի այդ, իդուր են կարծում, թե վորակյալ բանվորի աշխատանքը «ավելի հեշտ ե», այսինքն աշխատանքային եներգիայի ավելի քիչ ծախսման հետ ե կապված, քան սեղագործ բանվորի աշխատանքը։ Հաճախ միանդամայն հակառակն ե տեղի ունենում։ Ճիշտ ե, բեռնողը իր բանվորական որվա ընթացքում չափազանց չափ ֆիզիքական չանք ե դորժությունը։ Շատ կերակուր ե տեսական հանդիսատես պահանջվում, վոր նա կարողանա վերականգնել իր ուժերը։ Բայց, որինակ, վորակյալ ջուշակը, վոր միաժամանակ 20-30 դադաշեմի աշխատանքին ե հետեւմ, բեռնողից վո՞չ թե պակաս, այլ ավելի ջանքեր ե թափում, միայն թե այդ ջանքերն այլ բնույթ ունեն։ Նա չափ մտավոր եներգիայի ծախսում։ Նրա ուշադրությունը միշտ պետք ե լրացնել լինի, չարժումները իմաստ հաշված, ճշգրիտ ե ճշտապահ պիտի լինեն, նա պետք ե արագությամբ վագփղի մի դադաշեմից մյուսը, չետեղ դրանց աշխատանքնե-

րին, ուղղի նրանց բոլոր թերությունները և այլն։ Ի վերջո, չնայած վոր նա ծանրություններ չի կրել, ինչպես բեռնողը, այլ արհեստանոցում հեշտ ու հանդիսատ գնացել յեկել ե, բանվորական որվա վերջին նա բեռնողից չափ ավելի և հոգնում ու նրա գործադրած եներգիան չափ ավելի յի բնանողի գործադրած եներգիայից։ Իր ուժերը վերականգնելու համար նա չափ ավելի բանի կարիք ունի, քան բեռնողը՝ ավելի յի, վո՞չ թե կերակրի կամ քունի քանակի տեսակետով, այլ ավելի մնադարար ու լավագույն սնունդի իմաստով։

Այս բոլոր հանդամանքները վորակյալ բանվորական ուժի արժեքն ավելի յեն բարձրացնում, քան անվորակ բանվորական ուժի արժեքը։ Այլ խոսքերով, վորակյալ բանվորի անհրաժեշտ կարիքների բավարարությունը հասարակական աշխատանքի ավելի մեծ ծախս ե պահանջում, քան սեղագործ բանվորի կարիքների բավարարումը։ Այդ պատճառով և, վոր վորակավոր բանվորի աշխատավարձն այն չափով ե բարձր, վորչափ բարձր ե նրա վորակը։

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԽՈՐՏԱԿՈՒՄԸ

Մենք քննեցինք կապիտալիստական տնտեսության ամենագլուխոր ինդիքները։ Փորձենք յաժմ տալ նրա ընդհանուր պատկերը։

Կապիտալիստական հասարակության մեջ մենք յերեք մեծ դասակարգ ենք տեսնում։ Խոշոր սեփականատերերի դասակարգ կամ բուրժուազիս (կալվածատերեր, բանկիրներ, Փարբիկանուներ), մասր սեփականատերերի դասակարգ կամ մասր բուրժուազիս (արհեստավորներ, զյուղացիներ, տնայնագործներ և այլն), և չունեոր բանվորների դասակարգ կամ պրոլետարիատ։ Կապիտալիստական հասարակության մեջ ստեղծված ամբողջ արդյունքը բաշխվում է այս յերեք դասակարգերի միջև։ Բուրժուազիան իր ձեռքն ե պահում բոլոր խոշոր Փարբիկաներն ու դոծրաբանները և գրա չնորդիվ ստանում ե հավելյալ արդյունք։ Բանվոր գասակարգը վաճառում է իր բանվորական ուժը, և, ի հմագիւ այս վաճառման, նույնագետ ստույմ ե հասարակական արդյունքի վորոշ մասը։ Վերջապես մասր բուրժուազիան, վոր

մասնակցում և հասարակական արարագրության պրոցեսի մեջ, նույնականում և իր բաժինը հասարակական արդյունքից։ Մի կոողմից խոշոր կապիտալիստի չափործման առարկան հանդիսանալով, իսկ մյուս կողմից ինքը բանվոր գասակարգին չափործման ավելությունը, այս գասակարգը բուրժուազիայի և պրոլետարիատի միջև միջին տեղ և բռնում։

Կապիտալիստական զարգացման ընթացքն աստիճանաբար փոխում և այս պատկերը հետեւյալ ուղղությամբ՝ Բուրժուա դասկարգը թվով նվազում է, բայց նրա հարստությունը արագությամբ ավելանում է։ Մանր բուրժուազիան աստիճանաբար քայլում և բանվորի վիճակին է համառման թանգոր զասակարգն արագությամբ ավելանում է, ըստ վորում նրա նյութական վիճակն ավելի ու ավելի խախուս և զառնում։

Ի՞նչպես և ինչո՞ւ յեւ այդ տեղի ունենում։ Քննենք այս հարցը։

Կապիտալիստաների զասակարգն ընդհանրապես և յուրաքանչյուր կապիտալիստ մասնավորապես ձգում էն, վոր իրենց ստացած հավելյալ արժեքն ավելացնեն։ Առանձին կապիտալիստների միջև մրցություն և առաջ զալիս հավելյալ արժեքի այն մասի համար, վորն ստանում և նրանցից յուրաքանչյուրը։ Ամեն մեկը ցանկանում է յուսից խիել նրա մասը։ Այդ բոլորը կատարվում է չուկայում՝ մրցակիցների պայքարի ձևով։

Մրցակցին հաղթել կարող և միայն նա, ով իր ապրանքը մրցակցից ավելի եժան և ծախում։ Իսկ ի՞նչպես կարելի յեւ ի՞շեցնել ապրանքի գինը։ Իհարկե, արտադրության ընդլայնմամբ և մեծացմամբ և տեխնիքական բարելավումների միջոցով աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելով։ Այդ պատճառով ել կապիտալիստներն իրար գլուխ պատռելով իրենց ֆարբիկաներում ամենաբարձր կատարելազործումներ են մացնում։ Պարզ է, վոր արտադրության այդ կատարելազործումների առարկում հաղթում են ավելի հարուստներն ու ընդունակները։ Վորեւ մեքենա զնելով իրենց ֆարբիկաներում, վորը մեծ չափով եժանացնում և ապրանքի գինը, նրանք հակայտկան քանակով ապրանքի են չպրատում չուկա։ Ավելի թույլ, իր մրցակցից յետ մնացած կապիտալիստը չի կարող նրա յետելից հասնել ու չի կարող ապրանքի գինն այնքան իջեցնել, ինչքան մրցակիցն և իջեցրել։ Նրա պիտք և իր ապրանքը վնասով ծախի և այլպիսով ի վերջում

քայլայիլի։ Նրան հաղթող կապիտալիստն այժմ կարող և ավելի մեծ քանակով ապրանք ծախել և ավելի մեծ չափով շահույթ ստանալ, քանի վոր այն գնողները, վոր առաջ գործ ունեցին նրա մըրցակցի հետ, այժմ գործ ունեն իր հետ։ Նրա ստացած հավելալ արժեքի բաժինն ավելացավ, նրա կապիտալիստների հետ։ Աւ այս յերեսույթը միշտ այդպես տեղի յի ունենում։ Դրա հետեւնքը լինում է այն, վոր կապիտալիստների թիվն արագությամբ նվազում, իսկ նրանց կապիտալիստներն ածում են։

Ծուկան ապրանք լցնելով, վոր տեղի յեւ ունենում մքցության պայքարի ընթացքում, կապիտալիստական հասարակությունը համախ այնպիսի վիճակի յեւ հանգում, վոր չուկայում ապրանքը չափազանց շատ և կիտում ու դրանց մի մասն այլես չի ծախվում։ Ի՞նչ և տեղի ունենում այս գեպքում։ Արտադրությունն առժամանակ կանգ և առնում։ Կապիտալիստները չեն կարողանում իրենց պատկանող ապրանքը փողի վերածել։ Մինչդեռ նրանց նեղում են պարտասուիրերը և պահանջում են վճարել պարտքերը։ Եփոթություն և առաջ զալիս և պայթում է կրիպիսը։ Համեմատար փոքր բոլոր կապիտալիստները, վորոնք կազ չունեն բանկերի հետ և դրամական մեծ կապիտալ չունեն փրենց ձեռքին, —կրիպիսի ժամանակ քայլայիլում են։ Աւ հետո, յերբ կրիպիսն անցնում է և արտադրությունը նորից սկսում է լրիվ ընթացքով առաջ գնալ, կապիտալիստների թիվն ավելի քիչ և զառնում։

Այդպես և կապիտալիստների զասակարգի գործը։

Ի՞նչ և կատարվում մանր բուրժուազիայի հետ։ Նա ել քայլայիլում է։ Նա ի վիճակի չեւ մրցելու կապիտալիստական խոչը գայլերի հետ։ Մի գարբին այլես չի կարողանում ծախել իր պատրաստած մեխերն այն գնով, ինչ զնով վոր ծախում և մեքենաներով մեխ պատրաստող ֆարբիկաները։ Նա ստիպված է կամ վնասով աշխատել, կամ ել փակել իր արհեստանոցն ու զնալ ֆարբիկանուի մոտ վարձկել։ Ճիշտ է, վեռ մի առ ժամանակ նա կառչում է իր արհեստանոցին, բայց չուտով կյանքն ստիպում է նրան իր սեփական գործի հաշվելները փակել և բանվոր զանալ։ Նույն վիճակին և յենթարկվում մանր բուրժուազիայի մեծամասնությունը։ Այս զասակարգից միայն շատ քիչը կարողանում

են վերև բարձրանալ։ Իսկ խոչոր մեծամասնությունը բանվոր են դառնում։

Այս բոլորի հետեւանքով բանվոր զատակարգն արագությամբ աճում է։ Նա անընդհատ լրացվում է քայլքայլած մանր բուրժուաղիայով՝ նախկին գյուղացիներով, արհեստավորներով, տնայնագործներով և այլն։ Այս ամբողջ հսկայական մասսան չի կարող տեղափորվել արտադրության մեջ, ու նրա մեծ մասը անդործ ե մնում։ Բացի այդ, տեխնիքական կատարելազործումները, վորոնք հաճախ հնարավորություն են տալիս տանյակ բանվորների աշխատանքը փոխարինել միայն մի բանվորի աշխատանքով, միշտ «ազատում են» աշխատող բանվորների մի մասսին։ Դրա հետեւանքը լինում է այն, վոր գործազրկությունն աճում է։ Իսկ կրիզիսների ժամանակ, յերբ արտադրությունն ամբողջովին կանգ ե առնում կամ խիստ կրծագում է, գործազրուրկների բանակը հսկայական չափերի յև համառում։ Յուրաքանչյուր բանվորի վիճակն անկայում ե գանում։ Նա վոչ մի վասահություն չունի, թե վաղը փողոց չի շպրտվի ու չի մատնվի սովի, ինչպես հազարավոր ու տանյակ հազարավոր նրա ընկեր գործազրուրկները։ Այդ պատճառով ել բանվորն սկսում է տաել կապիտալիստական հասարակությունը։ Նա տեսնում է, վոր տեխնիքական կատարելազործումները, վորոնք իրը թե ոլխախ բարելավեն մարդու վիճակը և հեշտացնեն նրա կյանքը, իրաք, տնտեսության կապիտալիստական պայմաններում, միայն վատթարացնում են բանվորի կյանքի պայմանները։ Նա սկսում է պայքարել կապիտալիստների դեմ յեռապատկված յեռանդով ու առաջադրում ենոր ծրագիր՝ հասարակության կազմակերպության։ Վո՞րն է այդ ծրագիրը։

Բանվորն ասում է՝ Կապիտալիստական հասարակությունը տանում է զեպի այն վիճակը, վոր բոլորը քայլքայլում ե վարձու բանվոր են զառնում։ Իսկ մի յերկու տասնյակ կապիտալիստներ աշխարհի տերն են դառնում։ Այս սեփականատերները չդիմեն ինչ անեն իրենց հարատությունը, մինչդեռ մինույն ժամանակ հազարավոր մարդիկ սովամահ են լինում։ Պետք է Փարբիկաների և գործարանների վրայից մասնավոր սեփականությունը վերացնել և արտադրությունն այնպես կազմակերպել, վոր զա ոգում բերի վո՞չ թե մի փոքրաթիվ խմբակի, այլ ամբողջ հասարակությանը։

Յեթե վո՞չացվի կապիտալիստների դասակարգը և արդյունաբերությունը հասարակական սկզբունքով կազմակերպվի, այն ժամանակ 1) կվերանա մարդու շահագործումը մարդու կողմից, 2) կվերանա հասարակության մի մասի չքավորությունն ու մասն մասի գեղխությունը, 3) աշխատանքը ծանր լուծ լինելուց հաճելի զրագմունք կրառնա և 4) մարդկային հասարակության յուրաքանչյուր անդամ կկարողանա զարգացնել իր բոլոր ուժերն ու ընդունակությունները։

Կապիտալիստներից սեփականությունը իւելը և հասարակական դարձնելը կատարում է ծրագրյալ (պլանային) արտադրություն և բաշխում կազմակերպելու հետ։ Շուկայի տարերային հարաբերությունների և արտադրությունը շուկայի կողմից կարգավորելու փոխարին հանդես կրա հասարակության մեջ յեղած բոլոր բանվորական ուժերի ծրագրյալ գիտակցական բաշխումն բատ արտադրության զանազան ճյուղերի։ Հանդես կրա նաև սատացված հասարակական բարիքների ծրագրյալ գիտակցական բաշխումը։ Տնտեսությունն այլպես կազմակերպելիս ամեն մարդ դորձ կատարի և ամեն մեկը կստանա հասարակությունից այն բոլորը, ինչ անհրաժեշտ է իրեն։ Այդ հասարակությունը, վորի մեջ չկա մասնավոր սեփականություն, հենց կոմունիզմն է։

Կապիտալիստական զարգացումն ինքը հենց գնում է գեպի կոմունիզմ։ Բոլոր Փարբիկաների տնորենությունը քիչ ձեռքերում կենարունացնելով, հեշտությամբ հնարգոր և զառնում, վոր պրոլետարիատը խիլ կապիտալիստական սեփականությունը և ամբողջ տնտեսական կյանքը կենարունացված զեկավարի։ Իսկ անող գործազրկությունը, հաճախակի զարձող կրիզիսները և պրոլետարական աշխատավոր բանակի վիթխարի ավելացումը անխուսափելիորեն տանում է այն բանին, վոր պրոլետարիատը վերջապես կառավարության դեկն իր ձեռքը կառնի։

Նախկին Ռուսաստանում, այժմյան Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության մեջ արգեն կատարվել և կապիտալիստների սեփականության այս խլումը։ Փորձենք այժմ քննել, թե ի՞նչ է կատարվում այդ առաջին բանվորական պետության տնտեսության մեջ և թե մեր տնտեսության զանազան մասերի փոխադարձ հարաբերությունները ինչպիսի պատկեր ունեն։

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄ

Մեր Խորհրդային Միության տնտեսակալութիւն պետական կապիտալիզմ անունն են տալիս : Ի՞նչ է նշանակում այդ :

Մենք գիտենք, զոր կապիտալիզմ ե կոչվում տնտեսական այն կարգը, զորը մի կողմից հիմնվում ե վարձու աշխատանքի ոխտեմի վրա, իսկ մյուս կողմից շուկայի խիստ դարձացած հարաբերություններով ե աչքի ընկնում : Վարձու աշխատանք և շուկա՝ ահա կապիտալիզմի բնորոշ հատկությունները :

Մեր տնտեսությունն ել հիմնված ե վարձու աշխատանքի վրա : Շուկան ել զրա մեջ մեծ դեր է խաղում : Դա բացատրում է թե ինչու նրան կապիտալիզմ անունն են տալիս : Բայց ի՞նչ և պետական կապիտալիզմը :

Կապիտալիստական տնտեսության մեջ ամբողջ արդյունարերությունը բուրդուաղիայի ձեռքն ե գտնվում : Մեզ մոտ, սակայն, այս բանը չկա : Մեր արդյունագործության հիմնական ձյուղերը պետության ձեռքումն են գտնվում : Մեզնում գլխավոր ու հիմնական նախաձեռնողը հանդիսանում է վո'չ թե կապիտալիստը, այլ պետությունը : Այդ պատճառով հենց մեր տնտեսության սիստեմը պետական կապիտալիզմ է կոչվում :

Բայց ասել, թե մեզնում գլխավոր նախաձեռնողը պետությունն ե, դա քիչ է : Պատական իշխանությունը Խորհրդային Միության մեջ գտնվում ե բանվոր գասակարգի ձեռքին : Այդպիսով, մեզնում գլխավոր տնտեսական ձեռնարկատերը բանվոր գասակարգն ե, զոր կազմակերպել ու պետություն ե կազմել : Այս հանգամանքը մեր տնտեսությանը տալիս ե մի շարք չտփաղանց կարեոր տարբերիչ հատկանիշներ :

Յեթե մենք ուշադրությամբ նայենք մեր տնտեսական կյանքի վրա, իսկույն և յեթ նրա մեջ կնակատենք յերեք տարբեր անտիստական ձեեր : Նախ և առաջ, Խորհրդային Միություն մեջ շատ զգաւոր զգացնելու կան, այսինքն մանր դյուզացիական տնտեսություն անեցնենք : Նրանցից ամեն մեկն արտադրում ե ինքնուրացին ու անկախ ուրիշներից, ու զրանց արտադրության բավական մեծ մասը չնեկայի գալիս Մեր եկոնոմիկայի այս մասը կարելի մեանվանել մանր ապրանքային տնտեսություն : Յերկրորդ, մեղ մոտ գոյություն ունի մասնավոր առետրականը և մատնավոր ձեռնարկատերը, զոր պետությունից կապալոով ե վերցնում այս

կամ այն վոքք գործարանը : Բացի այս մասնավոր ձեռնարկատերերից, Խորհրդային Միության մեջ կան նույնպես և մի շարք կոնցեսիոններ, այսինքն մասնավոր կապիտալիստներ (գլխավորապես ուսարերկրյա), վորոնք վորոշ ժամանակամիջոցով ու վորոշ պայմաններով կապալով են վերցրել մեր մի քանի բնական հարատությունների մշակման գործը : Մեր եկոնոմիկայի ամբողջ այս մասին կարելի յե տալ մասնավոր-նույնական կապիտալ անունը : Վերջապես ամբողջ խոշոր արդյունաբերությունը, յերկարթուղինները, շոգենավերը, արտաքին առետուրը և ներքին առեւրի մի շարք խոշոր կաղմակերպությունները (սինդիկատներ, կոոպերացիա և այլն) պատկանում են պետությանը և զեկավարվում են նրա կողմից : Մեր տնտեսության այս մասը մենք կարող ենք անվանել պետական կապիտալ :

Ի՞նչպիսի՞ փոխազարձ հարաբերությունների մեջ են գտնվում այս մասերը և վորն ե նրանից առավել կարևոր դեր խաղում : Ի՞նչ որենքների և յենթարկվում մեր տնտեսական կյանքը, և ի՞նչով են այս որենքները տարբերվում սովորական կապիտալիզմի որենքներից : Վորոնք են մեր տնտեսության առաջարկացման ուղիները : Աչա՛ հարցեր, վորոնք միանգամբ հառանում են մեր առջեւ և վորոնց կաշխատենք պատասխան տալ :

Նախ և առաջ պարզ է մի բան, զոր յեթե մենք մեր տնտեսության առողջին յերկու մասերին, այսինքն մանր ապրանքային տնտեսությանը և մասնավոր կապիտալին, թույլ տայինք անարգել զարգանալ, այն ժամանակ մենք կունենայինք կապիտալիզմի ամենասովորական ձեր : Բայց չե՞ վոր մեր Միության մեջ մենք ունենք չափութեղի և խոշոր պետական տնտեսական կաղմակերպություն, վոր վճռական դեր է խաղում արդյունագործության բոլոր գլխավոր ձյուղերի մեջ : Նա չափագոված է, վոր զարգացման ճանապարհն ուղղվի վո'չ թե դեպի կապիտալիզմը, այլ դեպի սոցիալիզմը, քանի վոր նրան դեկավարում և սոցիալիստական գասակարգը՝ պրոլետարատը : Այդ պատճառով ել վերջինս միջամտում է տնտեսական կյանքի ընթացքին և ողում է այն յերեվույթների զարգացմանը, վորոնք համապատասխանում են սոցիալիստական կարգին և, ընդհակառակը, արգելք է հանդիսանում այն յերեվույթներին, վորոնք բացառապես կապիտալիստական կարգի առանձնահատկություննեն :

Ի՞նչպիս է դա հնարավոր և ի՞նչպիս է արվում դա :

Բանվորական պետությունն իր ձեռքումն և պահում ամբողջ ծանր արդյունաբերությունը, հաղորդակցության ճանապարհները և թթե արդյունաբերության բոլոր գլխավոր ձեռնարկությունները (այսինքն տեքստիլ ֆաբրիկաները, մասսայական դործածության առարկաների մշակումը և այլն): Շուկայում շրջանառվող լայն սպառման ապրանքի տնօրենությունը նրա ձեռքին է: Այսինքն առետուրը նույնպես պետության ձեռքն է, այնպես վոր արտասահմանյան կապիտալը կարող է մուտք գործել Խորհրդային Միություն միայն այն դեպքում, յեթե դա ձեռնարկ լինի բանվոր դասակարգին: Ապրանքների լայն սպառման անորինությունն իր ձեռքում պահելով, խորհրդայն իշխանությունը շուկան զեկավարելու հնարավորություն ունի: Նա, որինակ, կարող է թելադրել այն գները, վորոնցով պետք է վաճառվեն ապրանքները: Մասնավոր կապիտալիստները, վորոնց գերը արտադրության մեջ մեծ չի, չեն կարող վաճառել իրենց ապրանքներն այն գներով, վոր իրենց հաճելի յի: Նրանք պետք է հարմարվեն պետական մարմինների գներին, վորովհետեւ, յեթե նրանց գները բարձր լինեն, այն ժամանակ նրանք վո՞չ մի գնող չեն ունենա: Յեթե մասնավոր կապիտալն ոկտի տնտեսության վորեն ճյուղի մեջ շատ խոր արմատներ գցել, ասենք որինակ մսի առեվտրի մեջ, ու իր ձեռքն առնի մսի շուկան, այն ժամանակ պետական մարմինները միշտ կարող են նրան «զցել» այս գիրքից: Մսի բավականաչափ պարտիաներ արտասահմանում գնելով, խորհրդային իշխանությունը կարող է ներքին շուկայում բաց թողնել այն այնպիսի գներով, վոր անձնունու կլինի մասնավոր առեվտրականների համար և կըայքայի նրանց: Նրանք կզրկվեն իրենց հաստատուն վիճակից: Պետական կապիտալի հետ շուկայում նրանց պայքարելուն նախորոք արդեն անհաջողություն և վիճակի ված:

Պետական կապիտալին միշտ վերապահվում են յերկու առավելություններ՝ 1) նա կարող է շուկայում մենաշնորհյալ տնօրենություններ անել, 2) նա որինաչափ կերպով կարող է արտադրությունը կազմակերպել իրեն ցանկալի ուղղությամբ: Մասնավոր կապիտալն այս առավելությունները չունի: Նա չի կարող տիրապիտող դաւանալ շուկայում, քանի վոր արդյունաբերության բոլոր իշխող բարձունքները պետության ձեռքն են գտնվում: Նա չի կարող նաև այնպիսի մանյովքներ անել, ինչպես այդ ի վիճակի յե անել պե-

տական կապիտալը: Նա կախում ունի շուկայից և, նրա սանձը շուկայի ձեռքին է: Իսկ միեվնույն ժամանակ պետական կապիտալը տիրողն է շուկայում և կարող է այսուղ ստեղծել իրեն ցանկալի պայմանները:

Մենք արդեն բերինք մսի որինակը: Դրան նման գեղքեր լուրջային տնտեսական քաղաքականությունը կարող է տալ ինչքան ուղենք: Այդպես է, որինակ «մկրատի» հարցը, վորի մասին մանրամասն կիսունք ներքելում: «Մկրատը», այսինքն գյուղատնտեսության և քաղաքային արդյունաբերության արդյունքների միջև գրների իրարից հեռանալը շատ ցավագին եր անդրադառնում գյուղացության վրա: Շուկայի պայմաններն այնպես ելին, վոր գյուղացին պետք է քայքայվեր, ու գյուղատնտեսությունն ընկնում եր: Գյուղացիությանն ողնելու համար խորհրդային իշխանությունն ակսեց հացն արտասահման արտահանել, ուր հացի գները ավելի բարձր ելին: Պետական մարմիններն ակսեցին գյուղացու հացը գնել, ու հացի գինը բարձրացավ այնքան, վոր գյուղացիության վիճակը բարելավվեց: Այդ ձեռփ «մկրատի» յերկու բերանները իրար մուտքան:

Պետական տնտեսական մարմինների այս առավելությունները ժամանակոր կապիտալիստների վերաբերմամբ ապահովում են պետության հաղթանակը: Մասնավոր կապիտալը մեր Միության մեջ կարող է զարգանալ ու գոյություն ունենալ այն չափով միայն, ինչ շափով այդ անհրաժեշտ հՀամարի խորհրդային իշխանությունը: Խորհրդային իշխանության խնդիրն այն է, վոր սոցիալիստական հասարակություն կառուցի, այսինքն տնտեսական միայնպիսի կարգ, ուր շուկայի հարաբերություններ ու մասնավոր ռեգանություն չկա: Արդ կարգի նախապայմանն են մասնավոր կապիտալիստների վերացումը և ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում խոշոր պլանային արտադրության կազմակերպումը:

Խորհրդային Միության մեջ այժմ տնտեսական այսպիսի սիստեմ կառուցել չի կարելի: Խորհրդային Միության հսկայական մեծամասնությունը գյուղացիներ են կազմում: Նրանց արտադրությունը չի կարելի միանդամից սոցիալիստական ձեփով կազմակերպել, վորովհետեւ նա հիմնված է մանր սեփականության վրա (մենք նրան վերեցում ել հենց մանր ապրանքային տնտեսություն անունը ամինք): Նա կապված է շուկայի հետ: Բացի այդ, նրա բաժան-բաժանությունը ներկա պայմաններում պետությանը հնարավորու-

թյուն չի տալիս լրիվ կերպով բավարարել նրա առվաճախին կարիքները : Այդ պատճառով ել խորհրդային իշխանությունն սափակած է, գյուղացիության շահերն ինկատի ունենալով, թույլ տար, վոր շուկայի հարաբերություններ գոյություն ունենան : Վորպեսպի սոցիալիզմին անցնելը հնարավոր դարձի, պետք է գյուղատնտեսությունը՝ այլ կերպ կազմակերպվի՝ մանր ինքնուրույն անտեսություններից պետք է խոչըր անտեսությունների անցնել : Այդ անցումը նախապատրաստվում է գյուղատնտեսական կոռպերացիայի, գյուղատնտեսական արտելների և կոմունաների զարգացմանը : Գյուղացիներին ըստինքյան ձեռնուու յե իրենց մանր ինքնուրույն տնտեսությունները միացնել են մի միացյալ խոչըր տնտեսություններել : Բացի այդ, Խորհրդային իշխանությունը գյուղացիների այդ միությունների համար հատուկ բարենպատ պայմաններ և սահմանադրում, տալիս են նրանց հատուկ արտօնություններ և անտեսություններ ապահովություններ : Դրա շնորհիվ գյուղացիության մեջ աճում և միություններ կազմելու շարժումները :

Պետական տնտեսական մարմինների գյուղ մուտք գործելը, գյուղում կոռպերացիայի զարգացումն ու մասնավոր առելվարկանին դուրս քչելը ուժեղ կերպով կարապացնեն գյուղացիների միություններ կազմելու դործը : Խոկ պետական խոչըր արդյունավործության զարգացումը, գյուղի վրա նրա ունեցած ազգեցության ընդլայնումը և այնպիսի պետական ապարատ ստեղծելը, վոր կը կարողանա գյուղացիների բոլոր պահանջներին բավարարել, այդ բոլորն ի վերջո մասնավոր կապիտալին միանդամայն անպետք կդարձնեն :

Այն ժամանակ ել հնարավոր կլինի սոցիալիզմին անցնել :

Մենք տեսնում ենք այսպիսով, վոր մեր միության տնտեսության կարգն այնպես են, վոր դրանից սոցիալիզմին անցնելը, այսինքն ամբողջ հասարակական տնտեսության ավելի բարձր ու լավագույն կազմակերպության անցնելը՝ անխուսափելի յե : Գյուղատնտեսության, գյուղական կոռպերացիայի, արտելների և կոմունաների զարգացումը ահա զա յե Խորհրդային իշխանության հիմնական ինդիքտը : Դրա լիակատար աճումն հենց սոցիալիզմին անցնել կնշանակի :

Այդ անցման արագացման այն բոլոր միջոցներից զատ, վոր մենք թվեցինք խորհրդային իշխանությունը մի միջոց ել ունի . զա ելեքտրիֆիկացիայի զարգացումն ե : Գյուղատնտեսության ելեք-

տրիֆիկացիան, այսինքն գյուղացու առորյա գործածության մեջ ելեքտրականություն մացնելը ու դրա կիրառումը գյուղատնտեսության կարիքների համար, գյուղացու առջև միանգամայն յերեվան կհանի մանր արտադրության ամբողջ անշահավետությունն ու անհարմարությունը : Գյուղացիական միություններն այն ժամանակ վիթխարի քայլերով առաջ կը թան : Գյուղատնտեսության մեջ ելեքտրական շարժիչներ մացնելը մի քանի անգամ կը արձացնի գյուղատնտեսության արտադրողականությունը : Ընդամենք խոշոշ, միացյալ անտեսությունը կկարողանա ոգտվել այն բոլոր ոգուաներով, վոր տալիս ե ելեքտրականությունը, մինչդեռ մանր անտեսությունը կարող ե ելեքտրական եներգիան գործածել շատ փոքր չափերով միայն :

Այդ պատճառով ել գյուղատնտեսության ելեքտրիֆիկացիան խորհրդային իշխանությունը, առաջնակարգ ինդիքներից մեկն և համարում : Միայն այն ծանր պայմանները, զորոնցում գտնվում եր մինչեւ այժմ Խորհրդային Միությունը, միայն իմպերիալիստական ու քաղաքացիական կոլիզների գեռ մինչեւ այժմ ել չվերացված ծանր ժառանգությունը հնարավորություն չեն տալիս ինչպես Հարկն ե զարգացնել ելեքտրիֆիկացիայի աշխատանքը : Մակայ մեր տնտեսության ընդհանուր վերելքին ու մեր արդյունաբերության արտադրողականության բարձրացման զուգընթաց, ելեքտրիֆիկացիայի աշխատանքները կընդլայնվեն ե խորհրդային իշխանության դրած նպատակը կիրագործվի :

ԳԻՆՆ ՈՒ ԱՐԺԵՔԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

Մենք տեսանք, վոր կապիտալիստական համարակության մեջ ապրանքների գինը վարոշվում ե նրանց արժեքով, այսինքն բանվական ժամանակի այն քանակով, վոր պահանջում ե ապրանքի պատրաստումը : Նույն որենքն ե իշխում նաև մեր տնտեսության մեջ :

Այս հարցը կարելի յե համեմատաբար ճիշտ լուծել : Բանի վոր մեղնում գոյություն ունեն շուկայի հարաբերություններ, մեր տնտեսությունը յենթարկվում ե ապրանքային հասարակության որենքներին և, հետեւապես, արժեքի որենքին : Մակայն մեր տնտեսական կյանքում արժեքի որենքի հետ կապված մի շարք հատուկ յերեւյթներ կան, վորոնց մասին պետք ե խոսել :

Ամենից առաջ, քաղաքային արդյունաբերության արդյունքները առաջ առաջ պատճեն կան, վորոնց մասին պետք ե խոսել :

թի արժեքը մեզնում ավելի ուժեղ է աճել, քան գյուղատնտեսության արդյունքների արժեքը։ Դա բացատրվում է մի շարք պատճառներով։ Գլխավորը դրանցից այն է, վոր քաղաքային արդյունարերության հիմնական կապիտալը, այսինքն մեքենաները, շենքերը, կամ նյութերը և այլն, վոր չեն նորոգվել իմպերիալիստական և քաղաքացիական կուխների ընթացքում, շատ են մաշվել։ Արտադրության պայմանները վատթարացել են, և աշխատանքի արտադրողականության նշանակում և արժեքի ավելացում։

Բացի այս հանգամանքից, քաղաքային ապրանքների արժեքի բարձրացման խնդրում դեր խաղաց նաև արտադրության կրծառումը։ Գործարանները մինչեւ այժմ ել լրիվ չափով չեն աշխատում։ Նրանց արտադրանքը մեծ չի ։ Մինչդեռ մեքենաների, շենքերի և այլնի պահպանումը, կազմակերպչական ծախքերը, ղեկավարությանի պահպանումը և այլն, վոչ միա՛ն չեն նրանքել, այլ, ընդհակատուկը, աճել են։

Իսկ գյուղատնտեսության մեջ այդ հանգամանքները վո՛չ մի գեր չխաղացին։ Ճիշտ և, գյուղատնտեսության մեջ ել հիմնական կապիտալը մաշվել ա։ Շատ շենքեր են փչացել պատերազմի ընթացքում։ Գութաններն ու գյուղացիական տնտեսության այլ գործիքները մաշվել են։ Սակայն, գյուղատնտեսության այդ հիմնական կապիտալի նորոգումը մի կողմից չափ հեշտ է, վորովհետեւ ինքը կապիտալն ել հենց մեծ չի, իսկ մյուս կողմից կարող է արագությամբ նորոգվել։

Իսկ յերկրորդ հանդամանքը, այսինքն արտադրության մեջ մտանակցություն չունեցող հիմնական կապիտալի պահպանման ծախքը, գյուղատնտեսության մեջ չկար։

Արդյունարերության և գյուղատնտեսության արդյունքների արժեքի այդ անհավասարաչափ աճումը, թե վորքանով և անդրադառնում իր գների վրա, արտահայտվեց «մկրատի» ձևվով։ Բայց «մկրատի» բերանների հեռացմանը նպաստեցին բացի այդ՝ յերկու հանդամանք ել 1) քաղաքային տնտեսության արդյունքների գների բարումը տնտեսական առարատի անբավարար կարգավորման հետեւանքով և 2) շուկայում գյուղատնտեսական արդյունքների ավելի քանակով լինելը։

Քաղաքային ապրանքների գների բարումը մի ամբողջ շարք պատճառներ ուներ։ Նախ և առաջ, պետական արդյունարերական

միությունները ցանկանում եյին ավելի արագ իրենց համար՝ ըստ ջանառու կապիտալ ստեղծել և, բացի այդ, հիմնական կապիտալը, այսինքն մեքենաները, Փարբիկանների շենքերը և այլն նորոգել։ Յերկրորդ, պետական առետրի մարմինները բավական վատ եյին կարգավորված, նրանց աշխատակիցների հաստիքը չափազանց մեծ էր և այն ճանապարհը, վոր ապրանքն անցնում էր Փարբիկայից մինչև սպառովը, չափազանց յերկար էր։ Այս բոլորը միասին շատ էր ավելացնում վերադիր ծախքերը, և յերբ ապրանքը համար ու դրա գինն ավելանում էր մի քանի անգամ։ Կոռպերացիան, վորի միջոցով էր զյուղ գնում ապրանքի մի մասը, նույն բերություններն ուներ։ Նրա ապարատի անբավարար կարգավորումն ու ձկունությունը և նրա չափազանց բարդ ու ծանր կազմակերպությունը մեծ ծախքերի հետ եյին կապվում։ Այս բոլորի հետեւանքով կոռպերացիայի միջոցով անցնող ապրանքների գները պետք է ուժեղ կերպով բարձրանային, վորովհետեւ կառպերացիայի բոլոր ծախքերը ատրանքի վաճառմամբ եյին ծածկվում։ Այդպիսով քաղաքային ապրանքների գներն իրենց արժեքից ավելի եյին բարձրանում։

Այնինչ գյուղատնտեսության արդյունքների գները պետք է ընկնեցին ու ընկնեցին իրենց արժեքից ավելի ցածր։ Այսինքն մինչև պատերազմը, թուսաստանը շատ մեծ քանակությամբ հաց էր արտահանում արտասահման (նա առաջին տեղն էր բունում իր արտահանության քանակով)։ Իսկ իմպերիալիստական պատերազմի ժամանակից սկսած այս արտահանությունը գաղարեց։ Բայց չնորդիլ այն հանգամանքի, վոր իմպերիալիստական և քաղաքացիական կուխները վատ անդրադառ ցյուղատնտեսության վրա, այդ պատճառով ևլ մենք վո՛չ միայն չունեցինք գյուղատնտեսական արդյունքների ավելցուկ, այլ և ընդհակառակը, — զբանց պակասը չեյինք զգում։ Սկսած 1914 թվից մինչև 1921 թ. գյուղատնտեսության մթերքների գները միշտ բարձրանում եյին։ Բայց 1921 թվից, յերբ գյուղատնտեսությունը սկսեց բարելավվել և ցանքսի տարածությունն սկսեց ընդլայնվել, — զներն սկսեցին իջնել։ Ի վերջո, ներքին շուկայում հացի ավելցուկ առաջացավ, — ու դրա զներն իջան արժեքից զգալի չափով ցածր։ Դա, ի հարկե, շատ ցավագին ապկեցություն ունեցավ գյուղացիության վրա։ Քաղաքային արդյունքների գների բարձրացումը և գյուղատնտեսության արդյունքների զների անկումը, գյուղացուն հնարագորություն չեյին

տալիս, վոր նա իր տնտեսության համար վորեև բան գներ : Այդ պատճառով գյուղացիության վիճակը չառ վատ եր, ու գյուղատնտեսությունը սուր կրիպիս եր ապրում :

«Մկրտիք» վերացումը յերկու ճանապարհով տեղի ունեցավ : Մի կողմից մեծ ուշադրություն վարձիեց, վոր գները չլարվեն : Պետական մարմինները վրաու վերակազմության յենթարկվեցին՝ վերապիր ծախքերը կրծատելու համար : Բայց այդ խորհրդացին իշխանության տնտեսական մարմինները այլևս գներն այն չափով չափելացրին՝ իրենց համար ըրջանառու կապիտալ ստեղծելու նրա պատճեն : Պարզացվեց նաև առետրական առարատը :

Այս միջոցներով հնարավոր յեղավ ապրանքների գներն զգալի չափով իջեցնել : Այդ իջեցման հետ միասին բարձրացան նաև գյուղանահասական արդյունքների գները, վոր առաջ յեկավ արտասահման հաց արտահանելու շնորհիվ : Այս կերպ «մկրտար» դրայի չսափով վերացավ :

«Մկրտիք» լիակատար վերացումը կարող է տեղի ունենալ մեր որդյունագործության արտադրողականության բարձրացման հետեանքով : Յերբ մեր գործարանները կսկսեն գործել լրիվ ընթացքով, յերբ նրանց մշտական կապիտալը կվերականոնի լրիվ չափով, յերբ, վերջապես, կբարձրացվի աշխատանքի արտադրողականությունը, այն ժամանակ քաղաքացին արդյունաբերության և գյուղատնտեսության արդյունքների իրարից հեռացումը կվերանա : Ի հարկե, արդյունաբերության զարգացումը հնարավոր է ստանց գյուղատնտեսության վերելքի : Բայց դե լորհրդացին Միության մեջ գլխավոր գնողը գյուղացին է : Վորպեսզի արդյունաբերությունը կարողանա լրիվ ընթացքով աշխատել, նա պետք է կարողանա վաճառել իր արտադրանքը : Խոկ յերբ գյուղացին գներու միջոցներ չունենա, այն ժամանակ արդյունաբերությունը չի կարող միջոցներ չունենա, այս ժամանակի արդյունաբերությունը չի կարող մեր արտադրանքը վաճառել : Այդ պատճառով ել պարզ է, վոր մեր արդյունաբերության վերելքը կապվում է գյուղատնտեսության վերելքի հետ : Գյուղատնտեսության վերելքը կրարելավե գյուղացիության վիճակը : Այն ժամանակ նա մեր արդյունաբերության արտադրանքների լավ գնողը կը պատճառ ու արդյունաբերությունը կկարողանա միանդամայն ընդլայնվել :

Պարզ է, վոր մեր տնտեսության ընդհանուր վերելքը այնքան սրացան, վորքան ավելի ազատ միջոցներ կունենա լորչորդացին իշխանությունը : Այդ միջոցները, որինակ, գյուղացիու-

թյանը վարկավորելու, ելեքտրիֆիկացիայի աշխատանքներն ընդլայնելու և այլ հնարավորություններ կտան : Այդ պատճառով և, վոր խորհրդացին կառավարությունը բուրժուական պետությունների հետ բանակցելիս, հիմնական հարցերից մեկը վոխառության հարցն և առաջադրում : Փոխառությունը՝ լորհրդացին իշխանությանը կտար այն միջոցները, վորոնք անհրաժեշտ են մեր պատճենությանը վերացնելու արագացնելու համար :

ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

Խորհրդացին Միության մեջ կարելի յև նկատել բնակչության յերեք հիմնական խմբակցություններ : Նախ և առաջ մանր բուրժուազիան, գրան են պատկանում գյուղացիք, տնայնագործները և մանր արհեստավորները : Այս, բուրժուազիան, զարգացած է դիմավորապես առեւրականներից, բայց գրան են պատկանում նաև մանր ֆարբիկանների և զործարանների բոլոր վաշճականները : Վերջապես, պրոլետարիատը . նա զբաղված է դիմավորապես պետական արդյունաբերության մեջ . նրա մի մասը աշխատում է մասնավոր ձեռնարկատերերի մոտ : Պետական իշխանությունը պատկանում է պրոլետարիատին :

Այս յերեք խմբակցություններից արժեք և հետեապես, հաշվելյալ արժեք ստեղծում են մանր բուրժուազիատը : Մանր բուրժուազիի ստեղծած հավելյալ արժեքը մասամբ մնում է իր ձեռքում, մասամբ հարկերի ձեռվ բանվորացյուղական պետության տրամադրության տակ և դրվում, մասամբ ել բուրժուազիայի ձեռքն և ընկնում : Վերջինս կարող է ստանալ այդ հավելյալ արժեքը գյուղացիներից՝ զանազան վարկային դորձարքների միջոցով :

Պրոլետարիատի ստեղծած հավելյալ արժեքի գլխավոր մասը հոգուտ պետության և մնում : Ի հարկե, մասնավոր ձեռնարկերի մոտ աշխատող բանվորներն ստեղծում են հավելյալ արժեք հենց մասնավոր ձեռնարկատերերի համար : Բայց այդպիսի բանվորները քիչ են, վորովհետե մեր Միության մեջ մասնավոր ձեռնարկություններ քիչ են : Բացի այդ, այդ ձեռնարկատերերը իրենց ստացած հավելյալ արժեքի մի մասը տալիս են պետությանը հարկերի ձեռվ գորովհետե մեր կապիտալիսներից մեծ չափերով են դանձվում :

Այդպիսով, մեր տնտեսության մեջ արտադրված հավելյալ արժեքը մեծ մասամբ բանվորագյուղացիական իշխանության ձեռքն և ընկնում, նրա փոքր մասը ընկնում և բուրժուազիայի ձեռքը: Խորհրդային պետության ձեռքն ընկած հավելյալ արժեքը ինչի՞ վրա յե ծախսվում: —Դրանով 1) պահպատմ և ամբողջ պետական ապարատը, այսինքն կոմիսարիատների, տնտեսական մարմինների բոլոր աշխատավորները, բանակը և այլն, 2) զրահաշին կատարվում է ամբողջ լուսավորական աշխատանքը, 3) զրահի մի մասը ծախվում է անաշխատունակների, հաշմանդամների և այլն պահպանության համար, 4) այդ հավելյալ արժեքի մի մասը ծախսվում է պետական արդյունաբերության հիմնական կապիտալի նորոգման, ընդլայնման և նոր ձեռնարկություններ (ինչպես, որինակ, Վոլխովստրոյը և ուրիներն են) ստեղծելու վրա, վերջապես 5) զրահ վորոշ մասը ընկնում է բուրժուազիայի ձեռքը:

Առաջին չորս մասերը առանձին պարզաբանում չեն պահանջում: Պետական ապարատի, տրեստների, պետական առեւտրի և այլ աշխատավորները պետք է մի բանով ապրեն: Վորովհետեւ նրանք իրենք նոր արժեք չեն ստեղծում, այդ պատճառով ել, հասկանալի յե, հասարակությունը պետք է նրանց բաժին հանի իր պաշարից վորոշ մասը: Նրանց աշխատանքը պետք է հասարակությանը և ողուա և բերում նրան: Այդ աշխատանքը պետք է վարձատրվի: Նույնը պետք է ասվի նաև մնացած յերեք մասերի վերաբերմամբ: Բայց հինգերորդը առանձին պարզաբանում է պահանջում:

Մենք ասացինք, վոր հավելյալ արժեքի հինգերորդ մասը պետության ձեռքից բուրժուազիայի ձեռքն և ընկնում: Դա ի՞նչ պես կարող է տեղի ունենալ:

Բացատրենք այդ:

Մենք գիտենք, վոր մեր Միության պետական առեւտրի և կոռպերացիայի ապարատը գեռ թույլ ե և չի կարող ամբողջ ընակչության կարիքները բավարարել: Կամա թե ակամա այդ աշխատանքը պետք է լրացնել մասնավոր կապիտալի գործունեությամբ: Այդ պատճառով ել պետությունն ստիպված է իր ապարանքների մի մասը վաճառել մասնավոր կապիտալիստներին, իսկ գրանք արդեն վերավաճառում են այն սպառողներին: Պարզ է, վոր այս դուրսությունը պետությունը պահպանում է կապիտալիստներին պահպանությունը:

առ հավելյալ արժեքի վորոշ մասը, վորը նրանք այնուհետեւ իրենց շահույթն են դարձնում:

Դա, իհարկե, չատ անցանկալի յե Խորհրդային իշխանության համար ու միայն անհրաժեշտությունն է ստիպում այդ անել: Խորհրդային իշխանությունը շահագրգոված է, վոր անմիջապես սպառողի (զիսավոր սպառողը գյուղացիությունն է) հետ գործ ունենա ու, ամեն միջոց գործադրում է անցանկալի միջնորդներից ազատվելու համար: Այդ պատճառով ել այժմ պետության բոլոր ջանքերն ուղղված են այն բանին, վոր ամեն կերպ ընդլայնվեն, զարգանան ու ամրապնդվեն կոռպերացիայի և պետական առեւտրի մարմինները: Մասնավոր կապիտալի միջնորդական զերն այժմ հետզետե նվազում է ու ի վերջո պիտի վոչնչանա: Մասնավոր կապիտալն այժմ պետք է բավարարվի հավելյալ արժեքի միայն այն մասով, վոր մնում է իրեն իր սեփական արտգությունից:

Մանր բուրժուազիայից ստացած հավելյալ արժեքի մասն ել նվազում է: Դա տեղի յե ունենում յերկու պատճառով: —1) Պետությունն սկսում է ծավալել գյուղացիների վարկավորման սիստեմը և 2) Անում է կոռպերացիան, վորն աստիճանաբար դուրս է քում մասնավոր կապիտալիստին:

Գյուղացին հաճախ փողի կարիք է զգում իր ինվենտարը նորոգելու համար: Ցեթեւ առաջ այդ փողը նա պետք է վերցներ մասնավոր կապիտալից, այժմ, յերբ պետական վարկային հիմնարկությունները մոտեցել են գյուղին և մանր գյուղատնտեսական վարկի ոպերացիաները ընդարձակել են, —գյուղացու կախումը կապիտալիստներից շատ և նվազում: Մասնավոր կապիտալն այժմ չի կարող հեշտությամբ ճորտ գարեն գյուղացուն: Այդ պատճառով ել մասնավոր կապիտալիստները չեն կարող նրանից այն չափով հավելյալ արժեք ստանալ, վորքան կցանկանային իրենք:

Կոռպերացիայի, ի միջի այլոց նաև վարկային կոռպերացիայի, զարգացումն ել նույն զերն է խաղում: Շուկայից դուրս քշելով մասնավոր առելվարականին, կոռպերացիան գյուղացիության տնտեսությունը մոտեցնում է պետական մարմիններին: Պարզ է, վոր վերջիններս գյուղացիներին այնպես չեն վերաբերում, ինչպես մասնավոր կապիտալիստները: Կապիտալիստները մի բանի յեն ձգտում՝ կորզել գյուղացուց վորքան կարելի յե շատ: —ի նկատ-

շեն առնում գյուղացու տնտեսության շահերը : Իսկ բանվորադյու-
ղացիական իշխանության մարմինները հաշվի յեն առնում գյուղա-
ցիության շահերը : Նրանք չեն շահագրգոված , վոր գյուղացուց
մեծ շահույթ կորպեն , այլ շահագրգոված են , վոր գյուղատնտեսու-
թյունը բարձրանա : Նրանց նպատակը վո՞չ թե շահույթ և , այլ
բանվորագյուղացիական Միության վերածնությունը :

Այդպիսով մենք տեսնում ենք , վոր նեպական բուրժուազիայի
ստացած հավելյալ արժեքի մասը հետզետե նվազում է : Իսկ
բանվորագյուղացիական կառավարության ստացած հավելյալ
արժեքը վո՞չ թե առանձին անձանց ոգորին ե ծառայում , այլ
ամրող հասարակության բարիքին : Դրա մի մասը ծախսվում է
արդյունաբերության և գյուղատնտեսության ընդլայնման վրա ,
մի մասն ել , պետական իշխանության անհրաժեշտ հիմնարկու-
թյունների և մարմինների պահպանման վրա :

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԽԱՅՄ-ՈՒՄ

Մենք տեսանք , վոր կապիտալիստական հասարակության մեջ
աշխատավարձը միջին թվով այնպիսի մակարդակի վրա յի պահ-
պում , վոր գրանով բանվորն այնքան արդանք ե կարողանում գնել ,
վոր հաղիվ հազ բավարարում ե իր կարիքներին : Այլ խոսքերով
աշխատավարձը համապատասխանում ե բանվորական ուժի ար-
ժեքին : Այդ կողմից ինչպես և մեր ԽՍՀՄ-ում :

Ենք մենք արդեն հիշեցինք այն մասին , վոր քաղաքացիա-
կան կոփների ժամանակ բանվորական ուժի գինը (այսինքն աշ-
խատավարձը) մեզ մոտ զգալի շափով ցածր եր նրա արժեքից :
Դա մեծութեա ազգում եր աշխատանքի արտադրողականության
վրա , վորն ուժեղ կերպով ընկած եր :

Պայքարի այդ ծանր ըրջանում խորհրդային կառավարու-
թյունը ի վիճակի չեր բանվորի կարիքները այնպես բավարարել ,
ինչպես հարկն ե , վորովհետեւ նրա բոլոր ուժերը և ուշադրու-
թյունը ուղղված ելին սպիտակ գվարդիականների հարձակումը
հետ մղելու վրա : Սակայն բոլորի համար պարզ եր , վոր աշխատա-
վարձի այդպիսի ցածր վիճակը յերկար ժամնակ չեր կարող տեսել :
Քաղաքացիական կովի վախճանը և տնտես . նոր քաղաքականու-
թյան անցնելը թույլ տվին զգալի շափով բարձրացնել աշխատա-
վարձը՝ բանվորագյուղացիական կառավարությունը բոլոր մի-

ջոցները ձեռք առաջ բանվորների գրությունը բարելավելու հա-
մար : Աշխատավարձն սկսեց բարձրանալ և առտիմանաբար բանվո-
րական ուժի արժեքին մոտենալով : Սակայն , մինչև այժմ ել դեռ
այս պրոցեսը չի վերջացել : Աշխատավարձի աճումը ինչո՞ւ յե-
այսպես գանգազ կատարվում : Թվում ե թե , յեթե մեր պետու-
թյան գլուխն անցել ե բանվոր գասակարգը , ուրեմն և նա հեշ-
տությամբ կարող ե իրադրութել աշխատավարձի արագ բարձրա-
ցումը : Սակայն դա տեղի չի ունենում : Ինչ պատճառներ են ապա
դրան խանգարում :

Այդ պատճառները մեր ժողովրդատնտեսության ընդհանուր
վիճակի մեջն են գտնվում : Աշխատավարձի անհապաղ բարձրա-
ցումը շատ վատ կանդրագանար ժողովրդատնտեսության վրա ,
և ահա թե ինչ կողմերով : Աշխատավարձի բարձրացումը Խոր-
հրդային իշխանության տնտեսական կազմակերպություններից
կապահնջեր լրացրացիչ ծախսեր , վոր խիստ կնվազեցներ նրանց
տանց այն ել փոքր ըրջանառու կապիտալը : Արդյունաբերության
ծավալումը կանդ կառներ և ընդհակառակը կոկսվեր նրա նեղա-
ցումը : Դա միանգամբ կանդրագանար ապրանքների դների
վրա : Դրանք կրածրանային ու «մկրատի» բերաններն ել ավելի
լայն կրացվելին : Գյուղացիական տնտեսությունը զրանից ուժեղ
կերպով կտուժեր : Երա գնողական ուժը կպակասեր , ու քաղա-
քային արդյունաբերության ալլրանքները չելին սպառվի : Մենք
կրիդիմուի մեջ կընկնելինք : (Դրան նման վիճակ մենք արդեն ապ-
րի ենք) : Այդպիսով , աշխատավարձի արագ ու խիստ բարձրա-
ցումը բանվորության վիճակը կրաբերալիք միայն առժամանակ :
Բայց դրա հետ անխուսափելի իրեն կազմած կրիզիսը շուտով ա-
ռաջվանից ել ավելի ծանր վիճակ առաջ կրերեր :

Բանվոր գասակարգի վիճակն ու նրա աշխատավարձը կարող
են բարելավել միայն մեր Միության ժողովրդատնտեսության ընդ-
հանուր վերելքին զարգնթաց : Վերի մենք արդեն ասացինք , վոր
մեր արդյունաբերությունը չի կարող առաջ զնալ ու ընդլանյվել
գյուղատնտեսության աճումից ու վերելքից անկախ : Արդյունա-
բերությունը հազարավոր թելերով կապված ե գյուղատնտեսու-
թյան հետ : Այդ պատճառով յերեք այդ յերկուսը չի կարելի իրա-
րից անկախ ու ինքնուրույն համարել ու քննել : Ճիշտ նույնպես
չի կարելի բանվորության վիճակը գյուղացիության վիճակից ան-
կախ քննել : Յեթե բանվորության գրության բարելավումը առաջ

անցնի, դա կարող ե տեղի ունենալ ի համիլ գյուղացիության վիճակի վատթարացման։ Դա իր հերթին առաջ կրերի արդյունաբերության ընդհատումներ և կանգրադառնա բանվորության վիճակի վրա։ Գյուղատնտեսության բարձրացումն, ընդհակառակը, կպայմանավորի արդյունաբերության վերելքը ու բանվոր գառակարգի վիճակի բարելավումը։ Յեվ այս, և այն կազմած են իրար հետ։ Մեկը պայմանավորվում ե մյուսով։

Այդպիսով թենք տեսնում ենք, վոր աշխատավարձի հարցի լուծումը կախված ե վո՞չ թե բանվորագյուղացիական կառավարության բարի կամքից, այլ անտեսության պայմաններից։ Յերբ աշխատավարձը բարձրանալու վորեւ հնարավորություն ե առաջ գալիս, դա անհապաղ կատարվում է։ Բանվորագյուղացիական կառավարությունը իր բոլոր ուժերը լարում է, վոր բարձրացնի և ընդարձակի մեր տնտեսությունը։

Այս խնդրի իրականացման հետ կվճռվեն և այն հարցերը՝ վոր այսոր մեծ են թվում։ Սնկառկած աշխատավարձը պիտի բարձրանա նախապատերազմիան աստիճանից ավելի բարձր։ Պետական կապիտալիզմի պարմաններում, յերբ իշխանության զընուխ անցած ե բանվոր դասակարգը, աշխատավարձը չի մնա այն աստիճանի վրա, վոր կար բուրժուական հասարակության մեջ նա անկառկած, ավելի բարձր կլինի։ Յեթե այժմ նա սոտենում ե նախապատերազմիան աստիճանին, նրա աճումն ալդ կետի վրա չի կանգ առնի։ Մեր տնտեսության զարգացումը թույլ կտա աշխատավարձն այն աստիճանի հասցնել վոր բանվորն ալես վոչ մի բանի կարիք չի զգալ։ Դրա համար ել այժմ մեր հիմնական խնդիրը մեր արզունաբերության բարձրացումն ու զարգացումն է։ Հենց այս խնդրի լուծմանն ել մենք պիտի նվիրենք մեր բոլոր ուժերը։



ԳՐԱՆ Ե 50 ԿՈՂ.